# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 26 (1526) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 16, 2011
VOLUME 31, NO. 26 (1526) SATURDAY, JULY 16, 2011

Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՁԱԽ ՈՒԺԵՐՈՒ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՁԳՏՈՂ ՀԱՄԱԺՈՂՈՎ



ՀՀ Կառավարութեան նիստերու դահլիճէն ներս տեղի ունեցած համաժողովի մասնակիցներու ընդհանուր տեսարանը

Մարտ 9-ին ՀՀ Կառավարութեան նիստերու դահլիճէն ներս տեղի ունեցաւ համաժողով՝ «Դեմոկրատական սոցիալիզմի համակարգի հաստատման հեռանկարը «Հայաստանի մէջ» նիւթին շուրջ: Ձախ ուժերու համախմբման ձգտող այս համաժողովը կազմակերպած էին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի շրջանի Վարիչ Մարմինը, ինչպէս նաեւ Հայաստանի Դեմոկրատական կուսակցութիւնը:

Համաժողովին հիւրաբար ներկայ էին Հայաստանի տարբեր քաղաքական կուսակցութիւններ՝ «Ժառանգութիւն», ՀՅԴ, ԱԺՄ, ինչպէս նաեւ առանձին հասարակական գործիչներ:

Համաժողովի բացումը կատարեց Դեմոկրատական կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան, որ իր ելոյթին մէջ անդրադարձաւ Հայաստանի տնտեսական տխուր իրողութեան եւ յիշեց հրատապ այն խնդիրները, որոնց լուծման ժամկէտները արդէն իսկ սպառած են:

«Այն խոշոր գործարարները, որոնք գործել են ու գործելու են օրինական դաշտում ու կ՛ենթարկուեն հասարակական պահանջին, կ՛ընդունեն պրոգրեսիւ հարկման սկզբունքը, որով էապէս կը կրճատուի սոցիալական աղետալի բեւեռացումը, նրանց գործունէու-

Շար.ը էջ 4

## ՕՊԱՄԱ ԵՒ ՄԵԴՎԵԴԵՒ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԸ

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱՄԱԿԸ ՅԱՆՁՆՈՒԵՑԱՒ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Երկուշաբթի, Յուլիս 11-ի երեկոյեան Ռուսաստանի եւ Միացեալ Նահանգներու նախագահները հեռաձայնային խօսակցութիւն ունեցած են, որու ընթացքի քննարկած են նաեւ ղարաբաղեան հարցի լուծման առնչուող հարցերը:

Քրեմլինի կողմէ տարածուած պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, որպէս ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահող երկիրներու ղեկավարներ՝ Դիմիտրի Մեդվեդեւ եւ Պարաք Օպամա մտքեր փոխանակած են հակամարտութեան կարգաւորման շուրջ: Միացեալ Նահանգներու նախագահը բարձր գնահատական տուած է այն ջանքերուն, որ կը գործադրէ Ռուսաստանի առաջնորդը այս ուղղութեամբ, մասնաւորապէս, Կազանի մէջ վերջերս կայացած՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու հանդիպման ժամանակ:

Միեւնոյն ժամանակ, երկու կողմերը պատրաստակամութիւն յայտնած են, հետագային եւս փոխհամաձայնեցուած քայլեր ձեռնարկել, օգնելու Պաքուին եւ Երեւանին՝ գտնել հակամարտութեան խաղաղ լուծումը:

Միւս կողմէ, անցեալ շաբաթավերջին, նախագահ Մեդվեդեւ Երեւան եւ Պաքու գործուղած է արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրովը: Ան երկու երկիրներու Հայաստանի նախագահներուն փոխանցած է Ռուսաստանի նախագահի նամակները:

Սերժ Սարգսեանի հետ ունեցած իր հանդիպումէն ետք, Լաւրով ըսած է թէ, Հայաստանի նախագահը ամենայն ուշադրութեամբ կ՛ուսումնասիրէ Ռուսաստանի նախագահի առաջարկները, եւ կը պատրաստէ իր պատասխանը:

«Հայաստանի նախագահը վերահաստատեց բարձր գնահատականը [ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի] համանախագահներու գործունէութեան, Ռուսաստանի Դաշնութեան

Շար.ը էջ 4

## ԷԴՈՒԱՐԴ ՇԵՒԱՐԴՆԱՁԷԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՐՆԱՅ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձէ հարցազրոյցի մը ընթացքին ըսած է որ, Հայ Առաքելական եկեղեցւոյ իրաւաբանական անձի կարգավիճակ շնորհելու մասին օրէնքի ընդունումէն ետք, բացառուած չէ, որ Հայաստան հողային պահանջներ ներկայացնէ Վրաստանին:

Վրաստանի նախկին նախագահը յայտնած է, որ այդ օրէնքը բացասական ազդեցութիւն պիտի ունենայ Վրաստանի մէջ պետութիւն-եկեղեցի յարաբերութիւններուն վրայ:

«Այդ որոշմամբ խորհրդարանն ու նախագահը իրենք գիրենք հակադրեցին Վրաստանի պատրիարքին: Իսկ այդ պիտի ունենայ բացասական ազդեցութիւն,- ըսած է Շեւարդնաձէ, նշելով, որ վրացի պատգամաւորները պէտք է ներողութիւն խնդրեն պատրիարք Իլիա երկրորդէն:

Շեւարդնաձէի կարծիքով, օրէնքին մէջ տեղ գտած որոշ դրոյթներ հնարաւորութիւն կու տան հայերուն՝ պահանջներ ներկայացնելու ոչ միայն եկեղեցիներու, այլեւ Վրաստանի տարածքներու նկատմամբ:

«Սակայն յոյսով եմ, որ այդ տեղի չ՛ունենար: Այնտեղ կան խելացի մարդիկ, որոնք գիտեն, թէ քանի անգամ Վրաստանը իրենց փրկած է եւ ան հիմա եւս հայերուն օդի պէս պէտք է»,- ըսած է Էդուարդ Շեւարդնաձէ:

Յիշեցնենք, որ Վրաստանի խորհրդարանը անցեալ շաբաթ փոփոխութիւններ մտցուց «Քաղաքացիական օրէնսգրքին» մէջ, որու համաձայն, Վրաստանի մէջ կրօնական կազմակերպութիւնները, որոնց շարքին՝ Հայ Առաքելական եկեղեցին, իրաւաբանական անձի կարգավիճակ պիտի ունենան: Այդ որոշումը զանգուածային բողոքի ալիք բարձրացուց եւ Վրաց կաթողիկոս-պատրիարք Իլիա Երկրորդի ու նախագահ Միխէիլ Սահակաշվիլիի վարչակազմի միջեւ լուրջ հակասութիւններու պատճառ դարձաւ:



Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձէ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ 44 ՏՈԿՈՍԸ ԱՊԱԳԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ ՉԻ ՏԵՍՆԵՐ

Յուլիս 11-ին կայացած ասուլիսի ընթացքին ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի հայաստանեան գրասենեակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետեան փոխանցեց միջազգային կազմակերպութեան կողմէ պատրաստուած վերջին տուեալները: Մինչեւ Նոյեմբեր աշխարհի բնակչութեան թիւը կը հասնի 7 միլիարդի, սակայն, ըստ վիճակագիրներու կանխատեսումներուն՝ 2050-ին հայաստանաբնակներու թիւը, այսօրուայ հետ համեմատած, աւելի նուազ կ՛ըլլայ:

Ասուլիսին ներկայացուեցան ՄԱԿ-ի 2009-ին կատարած հետազօտութեան արդիւնքները, ըստ որոնց, Հայաստանի մէջ յառաջիկայ երեք տարիներուն յաջորդ երեխան ունենալու պատրաստակամութիւն յայտնած է հարցուածներու 16%-ը, լիարժէք բացառած է՝ 68%-ը, իւրաքանչիւր երիտասարդ ընտանիքի երեխաներու միջին թիւը կազմած է 1.5, մինչդեռ պարզ վերարտադրութեան համար անհրաժեշտ է 2.1 երեխայ:

Հարցախոյզի մասնակիցներուն 44%-ը յայտնած է որ ապագան Հայաստանի մէջ չի տեսներ:

Ըստ Աշխատանքի եւ սոցիալական հարցերու նախարարութեան ժողովրդագրութեան բաժնի պետ Վանիկ Բաբաջանեանի՝ աշխարհի մէջ ոչ մէկ վիճակագրութիւն չի կրնար նշել ժողովրդագրութեան բացասական միտումներու բոլոր պատճառները: Բնակարանային պայմաններ, աշխատանքային պայմաններ, առողջապահական վիճակ, ծնող ըլլալու պատրաստակամութիւն...

Ըստ Բաբաջանեանի՝ անհիմն են այն խօսակցութիւնները, թէ Հայաստանի մէջ արտագաղթը աղէտալի չափերու կը հասնի կամ վտանգաւոր չափերու կը հասնի ժողովրդագրութիւնը: «Ջեմ կարող ասել, թէ ժողովրդագրութեան բարելաւման ուղղութեամբ կատարուող քայլերը բաւարար են, սակայն իրականացւում են ծրագրեր՝ նպաստելու ծնունդների թիւի աւելացմանը, առողջապահական խնդիրների ապահովմանը եւ սոցիալական խնդիրների լուծմանը»,- ըսաւ ան:

# ՃԻՇՏԸ «ՖՈՐԲՍ» ԱՄՍԱԳՐԻՆ ԴԱՏԻ ՏԱԼՆ Է

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ

*Աշխարհահռչակ «Ֆորբս» ամսագրի հրապարակած տուեալները մեծ իրարանցում են առաջացրել իշխանական շրջանակներում, ընդ որում՝ իրարանցումը բաւականին տարօրինակ է: Իշխանական քարոզչամիջոցներն, օրինակ, անցել են հակայարձակման ու փորձում են ապացուցել, որ «Ֆորբսը» տուեալ դէպքում օբիեկտիւ չէ, նրանք յայտնի չէ, թէ ինչի հիման վրայ են եզրակացրել, որ Հայաստանի տնտեսութիւնն աշխարհի վատագոյն տնտեսութիւնների վարկանիշային աղիւսակում նախավերջինն է (մեզանից վատ վիճակում է միայն Մադագասկարը) եւ այլն:*

*Բանն այնտեղ է հասել, որ Հայաստանի կառավարութիւնն արդէն պարզաբանումներ է պահանջել ամսագրից: Իզուր էլ պահանջել են. դրա փոխարէն պէտք էր այդ աղիւսակի հեղինակին հրաւիրել Հայաստան ու մի լաւ պատիւ տալ, իսկ եթէ չխելօքանար՝ բռնել մի լաւ տփել: Բա ինհարկէ. Թող միւս անգամ չհամարձակուի մեզ համեմատել ինչ-որ Զիմբաբուէի կամ Մոզամբիկի հետ եւ իմանայ, որ երբ մենք Թատրոն ունէինք...*

*տառակութիւն: Էլ ինչպէ՞ս կարելի է լուրջ ընդունել նման հեղինակի ուսումնասիրութիւնները:*

*Բայց իսկապէս, մի կողմ թողնենք իշխանութիւնների անյօդաբաշխ առարկութիւնները եւ փորձենք հասկանալ՝ ինչո՞ւ ենք յայտնուել նախավերջին տեղում, եթէ բնակչութեան կենսամակարդակի առումով Հայաստանից շատ աւելի վատ երկրներ կան: Խնդիրն էլ հենց այն է, որ «Ֆորբսի» հրապարակած վարկանիշային աղիւսակը ոչ թէ «ակնթարթային գնահատական է, այլ գործընթացների վերլուծութիւն: Պարզ ասած՝ Մոզամբիկում կամ Սվազիլենդում այսօր վիճակն իսկապէս շատ աւելի վատ է, քան Հայաստանում (այստեղ առարկելու բան չկայ), բայց եթէ ներկայ միտումները պահպանուեն, մի քանի տարի անց նոյն Մոզամբիկը կամ Սվազիլենդը կը մնան նոյն ծայրայեղ աղքատ երկրները, իսկ Հայաստանը պարզապէս դեֆոլտի կ՚ենթարկուի: Ինչո՞ւ: Որովհետեւ Հայաստանի արտաքին առեւտրային հաշուեկշռի «մինուսը» գերազանցում է ՀՀ տարեկան բիւջէն, արտաքին պարտքը սպառնալի չափերի է հասնում, արտա-*

> Պէտք էր այդ աղիւսակի հեղինակին հրաւիրել Հայաստան ու մի լաւ պատիւ տալ, իսկ եթէ չխելօքանար՝ բռնել մի լաւ տփել

*մնացածը գիտէք:*

*Լաւ, բայց ի՞նչ էր գրել այդ ամսագիրը: Գրել էր, որ 2009-ին Հայաստանի տնտեսութիւնը 15 տոկոս անկում է ունեցել: Մերոնք աղմկում են, թէ չէ՛, 14.5 տոկո՛ս անկում է եղել (իրական անկումն, իհարկէ, մօտ 25 տոկոս է եղել, բայց այդ մասին ոչ մէկը չի խօսում): Ամսագիրը գրել է, որ Հայաստանում ինֆլյացիան 7 տոկոսից բարձր է, մէկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդիւնքը 3 հազար դոլարից ցածր է, երկրի էներգետիկան մեծ կախուածութիւն ունի Ռուսաստանից եւ Իրանից եւ այլն: Հիմա այս տուեալներից ո՞րն է սխալ: Ուշադրութիւն դարձրէք՝ ամսագիրը դեռ մի բան էլ մեր նկատմամբ բարեհաճ էր գտնուել ու չէր գրել, որ Հայաստանից տարեկան արտագաղթում է երկրի բնակչութեան 5 տոկոսը (!), որ բնակչութեան մէկ երրորդը ծայրայեղ աղքատ է, եւ այդպէս շարունակ: Ու գիտէ՞ք, թէ ինչ առարկութիւններ են բերում իշխանական քարոզիչները: Ասում են՝ աֆրիկեան որոշ երկրներում սովից երեխաներ են մահանում, նոյնիսկ մարդակերութեան դէպքեր են լինում, իսկ մեզ մօտ նման բաներ չկան, հետեւաբար՝ մեր վիճակն աւելի լաւ է: Աչքներս լոյս, մնում էր, որ այդպիսի բաներ էլ լինէին: Զնայած՝ այդ դէպքում էլ Տիգրան Սարգսեանը երեւի կը յայտարարէր, որ դա մեր մեծագոյն նուաճումն է, որովհետեւ սովից մահանում են թոյլ երեխաները, եւ ապագայում ուժեղ սերունդ ենք ունենալու: Հա, չմոռանանք ամենակարեւոր փաստարկը: Բանից պարզւում է՝ «Ֆորբսի» այդ հեղինակը մակրոտնտեսական ցուցանիշներից բացի զբաղւում է նաեւ առագաստանաւային սպորտով: Ինչպիսի խայ-*

*գաղթն ու գնաճն էլ վաղուց արդէն դուրս են եկել վերահսկողութիւնից: Պարզ ասած՝ եթէ տնտեսական անկում արձանագրած երկրները համեմատենք լեռան լանջով ցած գլորուող քարերի հետ, ապա այնքան էլ մեծ նշանակութիւն չունի, թէ տուեալ պահին որ քարը որ կէտում է գտնւում: Շատ աւելի կարեւոր է, թէ որն ինչ արագութեամբ է գլորւում: Իսկ մեզ մօտ այդ արագութիւնն ահաւոր մեծ է, ընդ որում՝ արդէն իսկ որեւէ տրամաբանութեան չենթարկուող: Միայն մի օրինակ բերենք: Այս տարի, եթէ նկատել էք, լաւ էլ ծիրանի բերք կայ, առաւել եւս՝ անցած տարուայ համեմատ: Բայց այս տարի բնակչութեան 70 տոկոսը ոչ մի հատիկ ծիրան չի կերել ու չի էլ ուտելու, որովհետեւ թանկ է: Թէ ինչու է թանկ՝ հասկանալի է. որովհետեւ արտահանում են: Բայց ինչպէ՞ս է պատահում, որ գիւղացիները չեն հարստանում: Ուէ՞ մէկը Հայաստանում, տեսե՞լ է հարուստ գիւղացի: Խօսքը հենց այս մեխանիզմների մասին է, որոնց արդիւնքում երկրի տնտեսութիւնը փլուզւում է, ու մարդիկ արտագաղթում են:*

*Իսկ «Ֆորբս» ամսագրին հաստատ արժէ դատի տալ ու մի 3 միլիոն դրամ պահանջել: Միայն թէ «հայցուոր կողմի» ներկայացուցիչը չպէտք է Տիգրան Սարգսեանը լինի, հակառակ դէպքում ամսագիրը դա կ՚օգտագործի որպէս իր իրաւացիութիւնը հաստատող «իրեղէն ապացոյց»:*

*«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*

# ԻՆՉՈՒ Է ՇՏԱՊՈՒՄ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Հետաքրքրական է, որ Սերժ Սարգսեանն այս անգամ շատ արագ արձագանքեց Հայ Ազգային կոնգրէսին: Սովորաբար, երկխօսութեան այս գործընթացի փետրուարեան մեկնարկից սկսած, Սերժ Սարգսեանն արձագանքում էր կոնգրէսի «ջրբաժանային» հանրահաւաքների նախօրէին, կամ գոնէ ընդամէնը մի քանի օր առաջ: Այսինքն նա արձագանքելու ժամանակը հնարաւորինս ձգում էր:*

*Բայց այս անգամ Սերժ Սարգսեանը կարծես թէ ժամանակից մօտ երկու ամիս «առաջ է ընկել»: Կոնգրէսը Յունիսի 30-ի հանրահաւաքում նրան տուեց ժամանակ մինչեւ Սեպտեմբեր, իսկ նա դեռ Յուլիսի կէսը չեղած յայտարարում է կոալիցիայի պատուիրակութիւն ձեւաւորելու մասին:*

> Սերժ Սարգսեանի համար դա գուցէ այդքան էլ մեծ զիջում չէ, կամ զիջում է ժամանակային առումով միայն, ոչ թէ բովանդակային: Ի վերջոյ, Սերժ Սարգսեանն ինչ է կորցնում ընդդիմութեան հետ պատուիրակութիւններով երկխօսելիս

*Ինչու է շտապում Սերժ Սարգսեանը: Ինչն է նրան այդպէս շտապեցնում: Հազիւ թէ սոցիալ-տնտեսական վիճակը, որովհետեւ ինչ-ինչ, բայց ամառն այդ առումով այսպէս ասած բնական, սեզոնային թեթեւացման շրջան է: Հետեւաբար այդ տեսանկիւնից նա թերեւս կարիք չունէր շտապելու եւ կարող էր մինչեւ Սեպտեմբեր համբերել:*

*Ըստ ամենայնի, ազդեցութիւն ունի Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման յետկազանեան գործընթացը, դրա նկատելի ակտիւութիւնը: Կարո՞ղ էր արդեօք այստեղ Սերժ Սարգսեանի համար լինել իրավիճակ, որ նրան ստիպէր ներքաղաքական գործընթացում գնալ սովորականից տարբերուող օպերատիւութեամբ զիջման:*

*Ինչպէս յայտնի է, Ռուսաստանը ներկայացնում է նոր առաջարկներ, կամ նոր մօտեցում: Յայտնի է նաեւ, որ Կազանից յետոյ Հայաստանը յայտարարել է, թէ Ադրբեջանի մերժման պատճառով է, որ չի կայացել համաձայնութիւնը: Հետեւաբար, եթէ ռուսները նոր առաջարկ են ներկայացնում, կամ նոր մօտեցում, դա կը նշանակի, որ փորձում են աւելի յարմար պայման ստեղծել հենց Ադրբեջանի համար: Չէ որ նա էր, գոնէ ըստ հայկական կողմի, կազանում ընդդիմացել ներկայացուած տարբերակին: Դա էլ իր հերթին հիմք է տալիս ենթադրել, որ ռուսների նոր մօտեցումն այդքան էլ նպաստաւոր չէ Հայաստանի համար: Ընդհանրապէս, մեղմ ասած կասկածելի էր մինչ այդ եղած տարբերակի նպաստաւորութիւնը: Իսկ նոր մօտեցման պարագայում նպաստաւորութիւնն էլ աւելի կասկածելի է դառնում:*

*Յիշարժան է, որ մինչ Լաւրովը տարբերակը կը բերէր Հայաստան, իսկ յետոյ Ադրբեջան, Սերժ Սարգսեանին է զանգահարում Հիլարի Քլինթոնը: Գաղտնիք չէ, որ եթէ Հայաստանին անհրաժեշտ լինի ընդդիմանալ կարգաւորման որեւէ տարբերակի, այն էլ Ռուսաստանի ներկայացրած, ապա նրա համար կենսական անհրաժեշտութիւն է դառնում Արեւմուտքի աջակցութիւնն այդ գործին: Չի բացառւում, որ ԱՄՆ Սերժ Սարգսեանին յայտնել է ռուսների նոր տարբերակը մերժելու հարցում անհրաժեշտ աջակցութիւն, բայց դրա դիմաց պահանջել, որ Սարգսեանը ներքաղաքական գործընթացում գնա զիջման եւ այսպէս ասած «չընկնի» Գալուստ Սահակեանի «խելքին»:*

*Բայց, նաեւ արժէ նկատել, որ Սերժ Սարգսեանի համար դա գուցէ այդքան էլ մեծ զիջում չէ, կամ զիջում է ժամանակային առումով միայն, ոչ թէ բովանդակային: Ի վերջոյ, Սերժ Սարգսեանն ինչ է կորցնում ընդդիմութեան հետ պատուիրակութիւններով երկխօսելիս: Կարծես թէ ոչինչ: Փոխարէնը շահում է ժամանակ: Իսկ եթէ գործընթացում ռիսկ էլ կայ, ապա այդ ռիսկը Սերժ Սարգսեանի համար հաստատ աւելի մեծ չէ, քան Հայ ազգային կոնգրէսի համար: Հետեւաբար երեւի թէ երկխօսութեան գնալու հարցում Սերժ Սարգսեանին առանձնապէս շատ համոզելու կամ ճնշելու կարիք էլ չկայ, թէեւ իհարկէ նա անկասկած կը փորձի տպաւորութիւն թողնել, որ շատ մեծ զիջում է անում դրան գնալով:*

*«ԼՐԱԳԻՐ»*


**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԾԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $80.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY



ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԴԵՌ ՉՈՒՆԻ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԻՐ ՕՐԱԿԱՐԳԸ

*Իշխանութիւնը եւ ընդդիմութիւնը քննարկումների ժամանակ սակաւ թիւով հարցերի կարող են անդրադառնալ: «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում այդ մասին ասաց ընդդիմութեան հետ երկխօսելու համար իշխանութեան կողմից ձեւաւորուած աշխատանքային խմբի հանրապետական անդամ Գագիկ Մինասեանը:*

*Պատգամաւորի խօսքով՝ աշխատանքային այդ խումբը ձեւաւորուել է Սերժ Սարգսեանի Յունիսի 17-ի անդրադարձի հիման վրայ, որտեղ նախագահը հարցերի չորս խումբ էր առանձնացրել, դրանց լուծման համար էլ կոնկրետ հասցէատէրեր նախանշել:*

*Աշխատանքային խմբի լիազօրութիւնները նախագահի անդրադարձում յստակեցուած են, յաւելեց Գագիկ Մինասեանը՝ մանրամասնելով. - «Չորս խմբի համար էլ ինքը նախատեսել էր պատասխանատուներ: Հարցերը, որոնք պէտք է վերաբերեն ընտրութիւններին՝ նախագահը ասել էր, որ նրանք [ընդդիմութիւնը] պէտք է համագործակցեն Ազգային ժողովի նախագահի հետ, սոցիալ-տնտեսական բնոյթի հարցերը՝ վարչապետի հետ, այն հարցերը, որոնք ենթակայ են նախագահի կարգաւորմանը՝ նախագահի աշխատակազմի ղեկավարի հետ, եւ այն հարցերը, որոնք ընդհանուր բնոյթի են՝ ներքին եւ արտաքին քաղաքականութեան ռազմավարական խնդիրներն են, ապա այս աշխատանքային խմբի հետ պէտք է քննարկեն»:*

*«Այսինքն, բաւականին սակաւ խմբի հարցեր կան, որոնք, կարծում եմ, պէտք է քննարկենք», - եզրակացրեց հանրապետական պատգամաւորը:*

*Իշխանութիւնների հետ երկխօսելու համար Հայ ազգային կոնգրէսը պատուիրակութիւն էր ձեւաւորել դեռ Յունիսի սկզբին, պատուիրակութեան կազմում ընդգրկուել էին հինգ անդամներ:*

*Թէեւ իշխանութեան տարբեր ներկայացուցիչներ բացառում էին, որ Հայ ազգային կոնգրէսի հետ երկխօսելու նպատակով պատուիրակութիւն կը կազմեն, սակայն պատուիրակներ, այնուամենայնիւ, ընտրուեցին:*

*Իշխանութիւնը դեռեւս չունի իր օրակարգը: Իսկ ընդդիմութիւնը պնդում է, որ իշխանութիւնների հետ կը երկխօսի մէկ՝ արտահերթ ընտրութիւններ անցկացնելու հարցի շուրջ: Իշխանութիւնը բացառում է երկխօսութիւնը այդ հարցի շուրջ ծաւալելու հնարաւորութիւնը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ 2 ՏՈԿՈՍ Է ԿԱԶՄՈՒՄ

*Առկայ ստանդարտներով Հայաստանն արդէն ծերացած երկիր է: Այս մասին ասաց անկախ փորձագէտ, ժողովրդագիր Ռուբէն Եգանեան՝ յաւելելով, որ ծերացումը համաշխարհային հիմնախնդիր է, եւ սպառնում է բոլոր երկրներին, բացառութեամբ՝ աֆրիկեան մի քանի երկրների:*

*Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարութեան ժողովրդագրութեան բաժնի պետ Վանիկ Բաբաջանեանը նշեց, որ կառավարութիւնն իրականացնում է մի շարք ծրագրեր, թեպէտ դրանք չի կարելի համարել բաւարար: «Իրականացւում է ծննդօգնութեան նպատակային ծրագիրը, որի շրջանակում ծննդօգնութիւնն անվճար է, երրորդ եւ աւելի երեխայի խրախուսման համար ընտանիքին տրամադրւում է 450 հազար դրամ պարգեւ եւ երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարաններ. այսօրուայ դրութեամբ 425 վարկ է ֆինանսաւորուել, որոնցից 175-ը մարզերում»,- ասաց նա:*

*«Ես կարծում եմ, որ մենք պիտի խթանենք երկրորդ երեխայի ծնունդը. նկատւում է մէկ երեխայով ընտանիքների թուաքանակի ընդլայնում»,- ասաց Ռուբէն Եգանեանը: Ըստ նրա՝ տարածաշրջանի բնակչութեան մէջ հայերի թիւը 2%-ից էլ պակաս է, եւ առաջիկայ տասը տարիներին կարող է նոյնիսկ 1%-ից իջնել. «Մեր սահմանակից երկրները շարունակում են բնակչութեան ընդլայնուած վերարտադրութիւն, մեզ մօտ ծնունդները 14 հազարով աւելին են մահացողներից, սակայն մենք ունենք նեղացում՝ այսինքն՝ մայրական-հայրական սերունդը պարզ ձեւով իրեն չի վերարտադրում»,- ասաց նա:*

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴԻԿ ՉԵՆ ՎՍՏԱՀՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔՆԵՐԻՆ

*Հայաստանում հարցուածների 39 տոկոսը չի վստահում տեղական հեռուստաալիքներին: Այդ մասին ասւում է «Հանրային կարծիքը հայկական լրատուամիջոցների մասին 2011 թուականին» հետազօտութեան մէջ, որն իրականացուել է Եւրասիա հիմնադրամի, Երեւանի մամուլի ակումբի, «Internews»-ի, Կովկասեան հետազօտական կենտրոնի կողմից, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալութեան (USAID) աջակցութեամբ:*

*Տեղական հեռուստաալիքների տրամադրած տեղեկութեանը վստահում է հարցուածների միայն 10 տոկոսը: Տեղական ալիքների նկատմամբ համեմատական վստահութեան մակարդակը կազմում է 42 տոկոս, իսկ մասնակի եւ լիակատար անվստահութիւնը կազմում է 25 եւ 14 տոկոս համապատասխանաբար:*

*Ազգային ալիքներին վստահում են 8 տոկոսը, 33 տոկոսը որոշակի կամ լիակատար անվստահութիւն ունի ազգային ալիքների նկատմամբ:*

*Յատկանշական է, որ տեղական, նաեւ ազգային թերթերին, ազգային եւ տեղական ռադիոյին աւելի քիչ են վստահում՝ ընդամէնը 5 տոկոս: Առցանց հրապարակումներին վստահում են հարցուածների 7 տոկոսը:*

*Նշենք, որ հետազօտութիւնն իրականացուել է 1400 տնային տնտեսութիւններում Հայաստանի բոլոր մարզերում եւ մայրաքաղաքում՝ սկսած 2010 թուականի Նոյեմբերից:*

## ՄԵԿՆԱՐԿԵԼ Է 8-ՐԴ «ՈՍԿԷ ԾԻՐԱՆԸ»



**Ֆրանսացի դերասանուհի Ֆաննի Արդան վարչապետ Տիգրան Սարգսեանի հետ կը քայլեն կարմիր գորգի վրայով՝ «Ոսկէ ծիրանի» բացման արարողութեան ժամանակ**

*Կիրակի, Յուլիս 10-ին Երեւանում մեկնարկել է «Ոսկէ ծիրան» միջազգային կինոփառատօնը, որի շնորհիւ արդէն ութերորդ տարին հայ արուեստասէրները հնարաւորութիւն են ստանում դիտելու աշխարհի տարբեր երկրներում նկարահանուած լաւագոյն՝ հիմնականում հեղինակային ֆիլմեր, որով էլ առանձնանում է երեւանեան միջազգային կինոփառատօնը:*

*Փառատօնը կիրակի երեկոյեան սկսուեց Շառլ Ազնաւուրի հրապարակից: Խորհրդանշական կարմիր գորգի վրայով անցան հայ եւ օտարերկրացի կինոգործիչները՝ փառատօնի կազմակերպիչների ուղեկցութեամբ: «Ոսկէ ծիրանի» բացման հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ «Մոսկուա» կինոթատրոնում: Այնտեղ մինչ փառատօնի բացման ֆիլմի՝ Աբբաս Քիառոսթամիի «Վաւերացուած պատճէն» ֆիլմի ցուցադրութիւնը, ողջոյնի խօսքերից յետոյ ստեղծագործական մեծ վաստակի եւ համաշխարհային կինոյի ասպարէզում իր ներդրման համար «Ոսկէ ծիրանի» բարձրագոյն պարգեւին՝ «Փարաջանովեան թալերին» արժանացաւ ֆրանսիացի հանրայայտ դերասանուհի Ֆաննի Արդանը:*

*Մինչ փառատօնի սկիզբը, կիրակի կէսօրին նրա հետ առանձին հանդիպում էր կազմակերպուած լրագրողների համար, որտեղ աւելի քան մէկ ժամ հանրայայտ դերասանուհին պատասխանեց ամենատարբեր հարցերին, այդ թւում՝ իր հայկական արմատների մասին հարցին՝ շեշտելով, որ դա ընտանեկան գաղտնիք է, եւ այդ մասին չի ուզում խօսել լրագրողների հետ:*

*Մինչեւ Յուլիսի 17-ը ներառեալ, «Մոսկուա» կինոթատրոնում, փառատօնի շրջանակներում ժամանակաւորապէս վերաբացուած «Նաիրի» կինոթատրոնում, Տիկնիկային թատրոնում, «Նարեկացի» արուեստի սրահում, ուշ երեկոներին նաեւ «Պօղոսեան պարտէզներ»-ում հնարաւոր կը լինի դիտել փառատօնին մասնակից ֆիլմերը:*

## ՉԿԱՅ ՄԻ ՈԼՈՐՏ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՁԱԽՈՂԱԾ ՉԼԻՆԻ ԱՍՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԷՏԸ

*«Թող որ մենք ամէն տեղ թուաբանօրէն լինենք առաջինը, դրանից մեր որակը չի բարձրանում»,- Յուլիս 12-ի ասուլիսում ասաց կառավարման փորձագէտ Յարութիւն Մեսրոպեանը հայրենական ապրանքարտադրողների միութեան նախագահ Վազգէն Սաֆարեանի հետ «Ֆորբսի տուեալները եւ իրականութիւնը» թեմայով բանավէճի ժամանակ: Նրա դիտարկմամբ՝ չկայ մի ոլորտ, որ Հայաստանը ձախողած չլինի:*

*«Բացարձակապէս կարեւոր չէ՝ որ տեղում է Հայաստանը «Ֆորբսի» ցուցակում, քանի որ եթէ վերջից երկրորդի փոխարէն յայտնուէինք, ասենք, հինգերորդ տեղում, վիճակը մեր երկրում դրանից չէր փոխուի: »,- յայտարարեց կառավարման անկախ փորձագետ Յարութիւն Մեսրոպեանը:*

*«Թէ՛ երկրի ներսում՝ տնտեսական իմաստով, թէ՛ տարածաշրջանում եւ թէ՛ ամբողջ աշխարհում մենք անմրցունակ ենք: Այստեղ հարցը նրանում է, որ մենք որակապէս ծուղակի մէջ ենք: Հայաստանը, որպէս երկիր, քանդւում է: Եւ քանդւում է թէ՛ տնտեսական ոլորտում, թէ՛ քաղաքական ոլորտում, թէ՛ սոցիալական ոլորտում եւ թէ՛, ընդհանրապէս, համակեցութեան ոլորտում: Շատ հաւանական է, որ մենք նախավերջին երկիրը չենք, բայց դրանից ոչինչ չի փոխուի»,-ասաց կառավարման փորձագէտ Յարութիւն Մեսրոպեանը:*

*Հայաստանի՝ նման վիճակում յայտնուելու մեղաւորը, ըստ Վազգէն Սաֆարեանի, Արեւմուտքն է:*

*«Այն կուրսը, որը վարւում է մեզանում, բերել է հասարակութեան ծայրաստիճան բեւեռացման՝ գերհարուստների մի փոքրիկ խումբ է առաջացել եւ հսկայ զանգուած աղքատ ժողովուրդ: Ինչո՞ւ «Ֆորբսը» չի մատնանշում այն պատճառները, որոնց արդիւնքում Հայաստանն ունի այսպիսի տխուր տնտեսական վիճակ, ինչո՞ւ «Ֆորբսի» մասնագէտները չեն ասում, որ տարիներ շարունակ իրենց կողմից Հայաստանին մատուցուած տնտեսական կողմնորոշիչների արդիւնքում է, որ Հայաստանը յայտնուել է այսպիսի ծանր տնտեսական վիճակում: Այս վիճակի համար մեղաւորը արեւմտեան կիսագնդի երկրներն են, ոսկէ միլիարդի երկրներն են, որոնք պարտադրել են այս տնտեսական քաղաքականութիւնը, որում յայտնուել է Հայաստանը եւ մենք ունենք այսպիսի վիճակ»,- ասաց Վազգէն Սաֆարեանը:*

# ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԼՐՏԵՍԵԼ ԵՆ ՅՕԳՈՒՏ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ

*Օրինական ուժի մէջ է մտել Երեւանի Աւան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան առաջին ատեանի դատարանի 2010թ. Հոկտեմբերի 25-ի դատավճիռը, ըստ որի ամբաստանեալներ ՀՀ քաղաքացի Գ. Հայրապետեանը եւպէտք էր այդ աղիւսակի հեղինակին հրաւիրել Հայաստան ու մի լաւ պատիւ տալ, իսկ եթէ չխելոքանար՝ բռնել մի լաւ տփել: ԻԻՀ քաղաքացի Բ. Բաղերին յանցաւոր են ճանաչուել համապատասխանաբար լրտեսութեան ձեւով պետական դաւաճանութիւն եւ օտարերկրեայ քաղաքացու կողմից լրտեսութիւն կատարելու համար: Այս մասին տեղեկացնում է գլխաւոր դատախազութեան պաշտօնական կայքը:*

*Դատարանը ապացուցուած էր համարել մեղադրող դատախազների ներկայացրած ապացոյցներն առ այն, Գ. Հայրապետեանը, հաւաքագրուելով ադրբեջանական յատուկ ծառայութիւնների կողմից ստացած առաջադրանքի հիման վրայ, հաւաքել եւ նրանց է փոխանցել գաղտնի տեղեկութիւններ ՀՀ զինուած ուժերի մարտունակութեան եւ պաշտպանունակութեան վերաբերեալ, ինչպէս նաեւ որոշակի տեսանիւթեր՝ հակահայկական քարոզչութիւն իրականացնելու նպատակով:*

*Ադրբեջանական յատուկ ծառայութիւններից վերջին յանձնարարութիւնը Գ. Հայրապետեանը ստացել է 2009 թուականի Սեպտեմբերի 1-ին՝ Հայաստան ժամանած ԻԻՀ քաղաքացի, ազգութեամբ ազերի Բ. Բաղերիից, իսկ որպէս հանդիպման նշանաբան ծառայել է Գ. Հայրապետեանին ծանօթ՝ Ադրբեջանի յատուկ ծառայութեան աշխատակցի լուսանկարը: Գ. Հայրապետեանը Բ. Բաղերիին հիւրընկալել է իր տանը եւ, ծրարով ստանալով հերթական առաջադրանքը, նրան յանձնել նիւթեր, որոնք կարող էին օգտագործուել հակահայկական քարոզչութիւն ծաւալելու համար, ինչը յայտնաբերուել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից Մեղրիի «Կարչեւան» սահմանային անցակէտում կատարուած ստուգման ժամանակ՝ Բաղերիի պայուսակի ստորին մասի տակդիրում յարմարեցուած գաղտնարանից:*

*Նախաքննութեան ընթացքում Գ. Հայրապետեանի բնակարանում կատարուած խուզարկութեան ժամանակ յայտնաբերուել է նաեւ հրազէն եւ ռազմամթերք:*

*Դատարանը հիմնաւորուած համարելով ամբաստանեալներին առաջադրուած մեղադրանքը՝ Գ. Հայրապետեանին դատապարտել էր 12 տարուայ ազատազրկման՝ ՀՀ քրէական օրէնսգրքի 299-րդ յօդուածի 1-ին մասով (լրտեսութեան ձեւով պետական դաւաճանութիւն), 235-րդ յօդուածի 1-ին մասով (ապօրինի կերպով հրազէն եւ ռազմամթերք ձեռք բերել ու պահել), իսկ Բ. Բաղերիին՝ 10 տարուայ ազատազրկման ՀՀ քրէական օրէնսգրքի 302-րդ յօդուածով (լրտեսութիւն, որը կատարուել է օտարերկրեայ քաղաքացու կողմից):*

## ՕՊԱՄԱ ԵՒ ՄԵԴՎԵԴԵՒ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*նախագահի անձնական ջանքերուն, վերահաստատեց շահագրգռուածութիւնը ղարաբաղեան կարգաւորման ճանապարհին հնարաւորին չափ արագ յառաջընթացի, իրական յառաջընթացի հասնելու հարցով», - հանդիպումին յաջորդած լրագրողներու հետ զրոյցի ընթացքին յայտնեց Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը:*

*«Այժմ մենք կը սպասենք պատասխանի», - ըսաւ Սերգէյ Լաւրով:*

*Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան իր կարգին լրագրողներուն յայտնեց.- «Մենք շնորհակալ ենք Դմիտրի Մեդվեդեւին՝ իր ջանքերի համար, որոնք ուղղուած են կողմերի միջեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման հիմնարար սկզբունքների համաձայնեցմանը: Մենք հենց այդ մտադրութեամբ՝ դրական տրամադրուածութեամբ, մեկնեցինք Կազան: Իսկ, թէ որքան է մօտ ապագայում հնարաւոր նման համաձայնեցումը, ես կարծում եմ, եթէ Ատրպէյճանը հետ վերցնի իր փոփոխութիւնները՝ այն տասը փոփոխութիւնները, որոնք նա առաջ քաշեց Կազանում, ապա նման առաջընթացը հնարաւոր կը լինի»:*

*Հայաստանի նախագահի նստավայրէն ոչ մէկ տեղեկութիւն փոխանցուած է Ռուսաստանի նախագահի նամակին բովանդակութեան մասին, թէեւ յստակ է թէ հոն կան նոր առաջարկներ՝ Ղարաբաղի հարցի լուծման շուրջ:*

*ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովը եւս, կոչ ուղղած է կազմակերպութեան ծիրին մէջ աշխոյժ ջանքեր գործադրել՝ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ: Այդ մասին կ'ըսուի Պելկրատի մէջ աւարտած ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի ամենամեայ նիստի եզրափակիչ հռչակագիրին մէջ:*

*«ԵԱՀԿ ԽՎ ափսոսանք կը յայտնէ Լեռնային Ղարաբաղի շուրջ վերջին շրջանին նկատուող լարուածութեան մեծնալուն առնչութեամբ ու հետեւողականօրէն կոչ կ'ուղղէ ԵԱՀԿ ծիրին մէջ աւելի աշխոյժ միջոցներ ձեռնարկել՝ Լեռնային Ղարաբաղի, Մոլտովայի եւ Վրաստանի մէջ չլուծուած հակամարտութիւններու կարգաւորման ուղղութեամբ»,- ըսուած է փաստաթուղթին մէջ, որ հրապարակուեցաւ Վեհաժողովի պաշտօնական կայքէջին վրայ:*

massispost.com
daily news updates

## ՖՐԱՆՍԱՀԱՅ ՌԵԺԻՍՈՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ ՏԵՍՆՈՒՄ Է «ՇԱՏ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ ՈՒ ՇԱՏ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ»

*«Երեւանի աշխուժութիւնը պէտք է աւելանայ»,- կարծում է ֆրանսահայ ռեժիսոր Սերժ Աւետիքեանը, ով Հայաստանում է «Ոսկէ ծիրան» միջազգային 8-րդ փառատօնի շրջանակներում:*



*ֆրանսահայ ռեժիսոր Սերժ Աւետիքեան*

*Յիշեցնենք, որ անցած տարի «Ոսկէ ծիրանի» շրջանակներում եւս Սերժ Աւետիքեանը Հայաստանում էր եւ փառատօնի պաշտօնական փակումը կատարուեց նրա «Շների կղզին» անիմացիոն ֆիլմով, որը Կաննի միջազգային կինոփառատօնում արժանացել է «Ոսկէ արմաւենու»:*

*Յուլիս 12-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ կիսելով իր տպաւորութիւնները՝ ռեժիսորը նշեց, որ չնայած մայրաքաղաքում փոփոխութիւնների, չնայած իրականացուող շինարարութեանը, պէտք է մի քիչ աւելացնել տեմպը՝ աշխուժութիւն հաղորդել:*

*«Իսկ դրա համար, կարծում եմ, տնտեսական պայմանները պէտք է լաւանան»,- բացատրեց ռեժիսորն ու յաւելեց. «Ես միջին խաւին, աշխատաւոր խաւին դեռ չեմ տեսնում փողոցում, տեսնում եմ գեղեցիկ հագնուած տղաների եւ աղջիկների, տեսնում եմ շատ աղքատութիւն ու տեսնում եմ շատ հարստութիւն, բայց միջին խաւը դեռ չեմ տեսնում»:*

*«Բայց հպարտութեամբ պէտք է ասեմ, որ ես չեմ տեսել մի ֆրանսիացու, մի իտալացու կամ մի չեխ, որը Հայաստանն այցելելուց եւ հայերի հետ շփուելուց յետոյ գոհ չվերադառնայ իր հայրենիք»,- յայտնեց Ս. Աւետիքեանը:*

## ԹՈՒՐՔԻԱ ՄԵԿՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ԹԻՒԸ ԱՒԵԼԱՑԵԼ Է

*Թուրքիա մեկնող հայաստանցիների թիւը 2011-ի առաջին 5 ամսուայ ընթացքում նախորդ տարուայ նոյ ն ժամանակահատուածի համեմատ աճել է 8,8 տոկոսով:*

*Ինչպէս NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակոյթի եւ տուրիզմի նախարարութիւնից, 2011-ի Յունուար-Մայիսի ընթացքում Թուրքիա է այցելել 18835 հայաստանցի, որը նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ աւելի է 8,8 տոկոսով:*

*Միայն Մայիսին Թուրքիա է այցելել 5256 հայաստանցի, որը նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ աւելի է 6,27 տոկոսով:*

*Նշենք, որ 2010-ին Թուրքիա էր այցելել Հայաստանի 69323 քաղաքացի, որն իր հերթին 7 տոկոսով աւելի էր 2009-ի համեմատութեամբ:*

*Թուրքիա այցելողների մէջ 2011-ի Յունուար-Մայիս ամիսներին ռեկորդային աճ են գրանցել ադրբեջանցիները՝ 45 տոկոս: Յիշեալ ժամանակահատուածում Թուրքիա է այցելել 231316 ադրբեջանցի:*

*Կրկին տպաւորիչ արդիւնքներ են գրանցել իսրայէլցիները, գրանցելով 58 տոկոս անկում՝ նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատութեամբ:*

*Իսրայէլցիների զանգուածային բոյկոտը սկսուել է 2010-ի Մայիսի 31-ից սկսած, երբ Իսրայէլի զինուորականները գործողութիւններ էին իրականացնել Կազայի հատուած ուղեւորուող թուրքական «Մաւի Մարմարա»-ի դէմ, որի ընթացքում սպաննուել էր 9 թուրք:*

## ՁԱԽ ՈՒԺԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎ

*Շարունակուած էջ 1-էն*

*թիւնը խոչընդոտի չի հանդիպի: Իսկ նրանք, որոնք կը շարունակեն կարծել, թէ իրենց դէմ խաղ չկայ, կը պատժուեն օրէնքով սահմանուած կարգով, ընդհուպ մինչեւ սեփականութեան ազգայնացում»,- յայտարարեց Արամ Սարգսեան:*

*ՍԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեան անդրադարձաւ յետխորհրդային Հայաստանի ազատական շուկայի առանձնայատկութիւններուն: «Բարերարը մուրացկանութեան է հասցրել տասնեակ հազարաւորների, այնուհետեւ՝ սկսել կոպեկներ բաժանել նրանցից մի քանիսին: Ռոբերդ Քոչարեանի ստեղծած ամէն մի բուրժուի կայացման համար պէտք է աղքատութեան, մուրացկանութեան եւ արտագաղթի դուռը հասցնել 40-50 հազար մարդու»,- յայտարարեց Վահան Շիրխանեանն՝ աւելացնելով, որ ազատ մրցակցութիւնը դարձած է մենաշնորհային, իսկ հաւասար պայմանները՝ «դաբրօ»-ների ստացման բազմաստիճան համակարգի:*

*ՀՅԴ ԱԺ պատգամաւոր Արծուիկ Մինասեանն իր ելոյթին մէջ յայտնեց, որ արտաքին առումով Հայաստան յայտնուած է վիճակի մը մէջ, երբ միջազգային մրցակցութեան տեսանկիւնէն երկրի վիճակը նկատուած է անմխիթար եւ պատճառներէն մէկը երկրէն ներսը իրականացուած ապաշնորհ քաղաքականութիւնն է:*

*Այլ ելոյթ ունեցողները եւս կարեւոր նկատեցին Հայաստանի մէջ 20 տարիներէ ի վեր գործող ազատական համակարգը փոխելու անհրաժեշտութիւնը, երկիրը դուրս բերելու համար ներկայ տագնապներէն:*

*Համաժողովի փակումը կատարեց ՍԴՀԿ կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեան:*

www.massisweekly.com

## ՍՊԱՀԱՆԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԹԱԼԱՆՈՒԱԾ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՆ ՀԱՆՈՒԵԼ



*Սպահանի Ս. Ամենափրկիչ վանքը*

*«Արաքս» շաբաթաթերթը յայտնում է, որ Սպահանի Հայոց Թեմի Թեմական խորհուրդը ուշացումով հանդէս է եկել պաշտօնական հաղորդագրութեամբ, ուր ասւում է.*

*«Սպահանի Հայոց Թեմական Խորհուրդը մեր ժողովրդին յայտնում է, որ տեղեկացել է՝ Անգլիայում աճուրդի են դրուել Ս. Ամենափրկիչ վանքի Թանգարանի ձեռագրերից առանձին մանրանկարչութեան էջեր: Անմիջապէս կապուել ենք մեզ վստահած մասնագէտ անձանց հետ՝ աւելի մօտկից ստուգելու հարցը եւ մեզ տեղեակ պահելու, որպէսզի օրինական միջոցներով խնդիրը պարզենք:*

*Առ այդ՝ հարցը խորհրդապահական ձեւով հետապնդում էինք՝ յանցագործին ի յայտ բերելու՝ գործընթացը չվնասելու նպատակով, եւ ներկայ փուլում ստուգւում են հանգամանքները՝ ձեռագրի էջերը վերադարձնելու նպատակով: Այսու մեր ժողովրդին դիմում ենք, որ անհիմն մեկնաբանութիւններից խուսափեն եւ վստահ լինեն, որ Սպահանի հայոց Թեմի ազգային մարմինները առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ նախանձախնդիր են եւ այս հարցը հետապնդելու են մինչեւ բարւօք լուծում»:*

*Իհարկէ, հայկական առածն ասում է «Լաւ է ուշ, քան երբէք», բայց հիմնական հարցը անհասկանալիօրէն մնում է չպատասխանուած: Ինչու Սպահանի հայոց Թեմի Թեմական խորհուրդը չի յստակեցնում, թէ երբ է իրականացուել թալանը եւ եթէ մամուլը չբարձրացներ թալանուած սրբապատկերների լուրը, ապա երբ էր խօսելու այս մասին: Իսկ ինչ նորութիւն կայ այս հաղորդագրութեան մէջ:*

*Այստեղ բերուած է «աճուրդ» բառը, որը չի օգտագործուել «Արաքս»-ի եւ հայկական այլ լրատուամիջոցների կողմից, ինչն ապացուցում է, որ հարցերը աւելի զարգացած են, քան մամուլում արծարծուածը: Այդ դէպքում հնարաւոր էր Ինտերպոլի միջոցով հարցը շատ արագ լուծել: Սակայն միւս կողմից հաղորդագրութեան ոճը ենթադրել է տալիս, որ ցայժմ հարցի մասին չի տեղեկացուել ոստիկանութիւնը եւ թւում է, որ Թեմական խորհուրդը իր սեփական միջոցներով է փորձում հարցը փակել:*

*Ու նաեւ, որ երկու յանցագործի հարց չկայ, ինչպէս գրել էր մամուլը, այլ միայն մի, որի առնչութեամբ ՍՀԹ Թեմական խորհուրդը վստահեցնում է. «Առ այդ՝ խորհրդապահական ձեւով հետապնդում էինք՝ յանցագործին ի յայտ բերելու՝ գործընթացը չվնասելու նպատակով, եւ ներկայ փուլում ստուգւում են հանգամանքները՝ ձեռագրի էջերը վերադարձնելու նպատակով»:*

*Աւելացնենք նաեւ, որ վերոնշեալ հաղորդագրութեան հեղինակները աշխատել են յանցագործին «խորհրդապահական ձեւով» հետապնդելու անհիմն բացատրութեամբ արդարացնել իրենց՝ Սպահանի հայոց Թեմի Թեմական խորհուրդի, երկար եւ անհասկանալի լռութիւնը եւ ինչու չէ նաեւ մեղսակցութիւնն այս գործում:*

*Վերջում, մեր կողմից ուզում ենք շեշտել, որ ամենայն անկեղծութեամբ հաւատում ենք, որ Սրբազան Հայրը իր կարելին կանի սրբապատկերների վերադարձնելու համար: Դրանով հանդերձ կարծում ենք՝ յանցագործութիւնը պարզելու բանալին նախ եւ առաջ ոստիկանութեան մօտ պիտի փնտռել եւ ոչ թէ «խորհրդապահական» անբացատրելի գործունէութեամբ:*

## ԹՈՒՐՔ ԶԻՆՈՒՈՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ: ՄՏԱՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՑ ՏԱՐԻՔ ԵՒ ՍԵՌ ՀԱՇՈՒԻ ԱՌՆԵԼՈՒ ԲՈԼՈՐԻՆ ԿՈՏՈՐԵՑԻՆՔ



*Վատիկանի արխիւների պատասխանատու Մոնսենիոր Սերժիօ Պագանիի արած յայտարարութիւնից յետոյ, թէ յաջորդ տարի Հռոմում կազմակերպուելիք* Lux in Arcana *ցուցահանդէսում Հայոց ցեղասպանութեան հետ կապուած գաղտնի փաստաթղթեր են հրապարակուելու, թրքական* Vatan*-ը հարցազրոյց է արել նրա հետ:*

*Պագանին նշել է, թե 1896-ին այն ժամանակուայ Հռոմի Պապ Լէօ 13-րդը սուլթանին կոչ է արել կարեկցանք ցուցաբերել եւ դադարեցնել իրականացուող ցեղասպանութիւնը: Պագանին շեշտել է, թէ Վատիկանի գաղտնի արխիւներում գտնուող Հայոց ցեղասպանութեան հետ կապուած փաստաթղթերը կը հրապարակուեն մէկ հատորանոց առանձին գրքով եւ այդ գրքից օրինակներ բերել:*

* Իրզրումցի մի ականատեսի վկայութիւն. Տեսայ, թէ ինչպէս են բազմաթիւ երեխաների կոտորում: Իմ զարմիկը 2 տարեկան երեխան ուսին պահած փախչում էր տնից, սակայն նրա վրայ կրակեցին՝ տապալելով գետնին: 2 զինուոր մօտեցան նրան եւ երեխայի աչքի առաջ սպանեցին...: Տեսայ, թէ ինչպէս են սպանում մեր քաղաքի հոգեւոր առաջնորդին: Աչքերը հանել էին, մորուքը՝ պոկել: Մինչ նրան սպանելը, զինուորները ստիպել էին նրան պարել:*

*Մուսթաֆա Սուլէյման անունով թուրք զինուորի վկայութիւնը. Մտանք հայկական գիւղեր եւ առանց տարիք եւ սեռ հաշուի առնելու բոլորին սպանեցինք: Մեր հետ գիւղ եկած քրտերը թալանում էին հայերի տները: Բազմաթիւ տարեց եւ հաշմանդամ հայեր թաքնուել էին քաղաքի կենտրոնում գտնուող դպրոցում, սակայն հրաման կար եւ նրանց էլ սպանեցինք: Գելիգուզան գիւղում 800 հայ սպանուեց կամ այրուեց: Հայր Յովհաննէսի աչքերը հանել էին, մորուքը, քիթը եւ ականջները կտրել: Ես ոչ մի երեխայ չեմ սպանել, նոյնիսկ 2 երեխայ եմ փրկել: Նրանց 3 օր թաքցրել եմ իմ վրանում, սակայն մի օր մտայ վրան եւ նրանց մարմինները մասնատուած գտայ:*

*Նշենք, որ արիւնոտ սուլթան Աբտուլ Համիտի հրամանով 1894-1896 թուականներին կոտորուել է աւելի քան 300 հազար հայ:*

Հ.Մ.Մ. ի Տիկնանց Յանձնախումբը
կազմակերպած է պտոյտ մը դէպի

SANTA BARBARA
Cachuma Lake, Solvang and Casino

Շաբաթ, Օգոստոս 6, 2011ին
Մեկնում առաւօտեան ժամը 7:30ին
Փասատինայի ակումբէն
1060 N Allen Ave., Pasadena, CA 91104

Ներառեալ ճաշ խորոված
Սակ $45 անձի

Հեռաձայնել
(626) 497-5111 (626) 429-8366



# 20 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԶՐԿԵՑԻՆ ՆԵՐՈՒԺԻՑ, ԲԶԿՏԵՑԻՆ ԵՒ ԹՇՆԱՄԱՑՐԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ.

ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ

ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեանի ելոյթը Հնչակեան կուսակցութեան եւ Հայաստանի Դեմոկրատական կուսակցութեան կազմակերպած »Դեմոկրատական սոցիալիզմի համակարգի հաստատման հեռանկարը« համաժողովում:

*20 տարին բաւարար ժամանակ է, որպէսզի հայ ժողովուրդը, քաղաքական ուժերը եւ իշխանութիւնը ամփոփեն անկախացած Հայաստանում ներդրուած լիբերալ տնտեսական համակարգի արդիւնքները: Ամփոփումը պէտք է պատասխանի հետեւեալ հարցերին .*

*1. Լիբերալ տնտեսական յարաբերութիւնների հաստատումը ապահովե՞լ է Հայաստանի զարգացումը եւ քաղաքացու բարեկեցութիւնը.*

*2. Եթէ համակարգը մասամբ է իրեն արդարացրել, ինչու՞մ են թերացման պատճառները եւ ինչպէ՞ս դրանք վերացնել.*

*3. Եթէ ամբողջովին է տապալուել երկրի զարգացման եւ ժողովրդի բարեկեցութեան ապահովման խնդիրը, ինչպէ՞ս իրականացնել սահուն անցում այլ տնտեսական համակարգի:*

*Այս հարցերի պատասխանները հաւասարապէս կարեւոր են ե՛ւ ժողովրդի ե՛ւ քաղաքական ուժերի ե՛ւ իշխանութեան համար:*

*Հնչակեան կուսակցութիւնը ունի իր կարծիքը 20 տարիների արդիւնքի վերաբերեալ, բայց մենք ուրախ կը լինենք այն փոխել, եթէ ապացուցուի հակառակը: Լիբերալիզմի մուտքը անկախ Հայաստան նշանաւորուեց հանրային ունեցուածքի սրնթաց սեփականաշնորհումով:*

*Սեփականատիրական Հայաստանի 20 տարիները. Գիւղացուն տրուած 492 հազ. հա վարելահողից այսօր օգտագործւում է 1/3-ը, 38 հազ հեկտար խաղողի այգիներից մնացել է 11-ը , 50 հազար հեկտար մրգատու այգիներից՝ 20 հազարը, 770 խոշոր ձեռնարկութիւններից մի քանիսն են աշխատում: Միւսները թալանուել եւ փակուել են՝ 820 հազարանոց արտադրական անձնակազմից մնացել է 80 հազար մարդ, իսկ 740 հազար բարձրորակ ինժիներներ տեխնոլոգներ, արհեստաւորներ, դարձել են գործազուրկներ կամ արտագաղթել են, 47 ակադեմիական, 100 գիտահետազօտական ինստիտուտներից եւ 200 կոնստրուկտորական բիւրոներից մնացել են 80, իսկ 21 հազար գիտաշխատողից 7000ը, նրանք էլ աշխատում են 10-30 տոկոս ծանրաբեռնուածութեամբ: Լիբերալ համակարգի գոյութեան 1ին տասնամեակում YUNDP- ի տուեալներով, Հայաստանից արտագաղթել է 900000 մարդ, այնուհետեւ եւս 6-7 հարիւր հազար մարդ: Նման մաշտապային տեղաշարժը բերել է հասարակութեան խորքային, հոգեւոր կապերի քայքայմանը, բարոյազրկմանը, հակադիր, թշնամական շերտաւորման, այլասէրուածների, աղանդաւորների աճին եւ բարոյական երիտասարդների, աւանդապաշտ հայերի անընդհատ նուազմանը, ինչին մենք բոլորս վկաներ ենք: Հարուստ եւ աղքատ, գործատու եւ վարձկան, բարերար եւ մուրացկան, օրէնքի կողմից անտեսուած եւ օրէնքով առանձնայատուկ պաշտպանուած: Սրանք են լիբերալ համակարգի յատկանիշները: Ուղղակի, Հայաստանում համակարգի ներդրման եւ արմատաւորման ողջ գործընթացը ուղեկցուել է մուտացիոն կերպափոխումներով՝ բարերարը նախ մուրացկանութեան է հասցրել տասնեակ հազարաւորների, այնուհետեւ սկսել կոպեկներ տալ նրանցից մի քանիսին, գործատուն նախ խլել է բանուոր-բաժնետէրերից նրա բաժնեմասը, յետոյ ճորտացրել նրան: Քոչարեանի ստեղծած ամէն մի բուրժույի կայացման համար պէտք է աղքատութեան, մուրացկանութեան եւ արտագաղթի դուռը հասցուեր 40-50 հազար հայ, ազատ մրցակցութիւնը դարձել է մենաշնորհային, հաւասար մեկնարկային պայմանների ապահովումը վերածուել է «դաբրոների» ստացման բազմաստիճան համակարգի: Մեծահոգութիւնը, սրտացաւութիւնը, երախտագիտութիւնը, յարգանքը մարդկային արժանապատուութեան նկատմամբ, անշահախնդիր օգնութիւնը արագօրէն իրենց տեղը զիջում են կենդանական բնազդին: Այսինքն, 20 շուկայական տարիները Հայաստանին զրկեցին արդիւնաբերական, գիւղատնտեսական եւ մտաւոր ներուժից, բզկտեցին եւ թշնամացրին հասարակութեանը: Մենք այստեղ չենք հաւաքուել հահյոյախառը, հիստերիկ քննադատութիւններ անելու եւ մեղաւորներ փնտռելու համար: Նման բան շատ ենք տեսել: Մենք հաւաքուել ենք, որպէսզի ճշտենք, թէ որտեղից, ո՞ւր ենք հասել եւ ունե՞նք արդեօք ելքի ճանապարհ:*

*Լիբերալ համակարգի ներդրման հեղինակները հասել են այս արդիւնքներին կոնկրետ տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Դրանցից մի քանիսին ես կանդրադառնամ:*

*1. «Պետութիւնը վատ տնտեսվարող է, իսկ մասնաւորը լաւ»՝ մէկ օրինակ բերեմ: Երթուղային գծերը մասնաւոր են: Երեւանում աշխատում են 3000 երթուղային տաքսիներ: Ամէն մի մեքենայից գծի տիրոջը օրեկան վճարւում է 7000 դրամ: Լաւ տնտեսվարողը այդ գումարով մէկ տարում կը նորացնէր բոլոր մեքենաները: Իհարկէ դա չի արուել: Խմելու եւ ոռոգման ջրերը տրուեցին մասնաւոր կառավարման: Գները տասնապատիկ բարձրացան, կորուստները շատացան, իսկ որակը վատացաւ: Որովհետեւ, եթէ տնտեսվարող պետութիւնը հետապնդում է ժողովրդին աշխատանքով եւ ապրուստով ապահովելու նպատակ, ապա մասնաւորը՝ ինքնահարստացման: Ո՞րն է ճիշտը Հայաստանի համար: Ռուսաստանը սեփականաշնորհեց նաւթի, ածուխի արդիւնահանումը, աւտոմեքենաշինական գործարանները: 20 տարի անց ոչ մի ոլորտը չի հասել ԽՍՀՄ-ի ցուցանիշներին: Արդիւնքում ունեն միլիոնաւոր գործազուրկներ եւ 2 տասնեակ միլիարդատէրեր: Եթէ լաւ տնտեսավարող ասելով պէտք է հասկանալ, թէ ինչքա՞ն արագ կարող է մէկը գերհարստանալ, տասնեակ եւ հարիւր հազարաւորներին աղքատութեան եւ մուրացկանութեան հասցնելու միջոցով, ապա սա, գոնէ Հայաստանի համար, թշնամական տեսութիւն է: Սա է, որ ստեղծել է ծայրահեղ բեւեռացում եւ խորը աղքատութիւն մեր երկրում: Այս կարծրատիպի հաստատման հեղինակը հեռաւոր Արեւմուտքն է եւ իսկ իրագործողները մի քանի անկուշտ հայեր: Վերջիններս Հայաստանին, Հայրենիքին վերաբերւում են որպէս ամէնօրեայ սպառման ապրանք: Սա է լիբերալ տնտեսական համակարգի ողջ էութիւնը:*

*2. «Եթէ դու դարձել ես կարողութեան տէր (իսկ Հայաստանում դա տեղի է ունեցել 95 %-ով մարդկանց, պետութեանը խաբելու, գողանալու, ճնշելու միջոցով), ուրեմն դու գործարար ես, խելացի ես, յուսալի ես: Արդիւնքում, նրանց տրուել են բարձրաստիճան պաշտօններ, կոչումներ, հնարաւորութիւններ: Բնականաբար՝ այս դաշտում զարգացում ապահովել հնարաւոր չի, քանի որ այս տեսակի մարդկանց նպատակը այլ է: Ուրեմն 19 ամեայ հակազարգացման գործընթացը շարունակուելու է քայքայելով եւ ամայացնելով երկիրը, քանի դեռ այդ մարդիկ եւ նրանց պահելու համար յօրինուած օրէնքները չեն յայտնուի աղբանոցում, իսկ թալանուածը չի վերադարձուի պետութեանը եւ ժողովրդին:*

*Ամենացաւալին այն է, որը այս մօտեցումը 90-ից առ այսօր իշխանութիւնները ընդունեցին որպէս անհերքելի իրողութիւն: Նոյնիսկ, Հայաստանի ազգային ունեցուածքի գոյքագրում չարեցին: Իսկ գուքագրումը ցոյց կը տար, որ մէկ շնչին հասնող ազգային ունեցուածքի ցուցանիշը Հայաստանում զգալի աւելի բարձր է քան Ատրպէյճանում, Վրաստանում եւ այլն: Մենք առաջարկում ենք անյապաղ իրականացնել երկրի ունեցուածքի գոյքագրումը: Չիմանալով ինչ ունես, անհնարին է կառավարում եւ զարգացում ապահովել: Միայն Քաջարանի հանքավայրի պոչերում կայ 130 տոն պլատինոիդների պաշար, իսկ Ալավերդու շլամներում աւելի շատ պլատին կայ, քան ոսկի Հայաստանի ընդերքում: Իհարկէ, դժուար է Հայաստանի այսօրուայ գիտա-տեխնոլոգիական քայքայուածութեան պայմաններում ստեղծել հազուագիւտ մետաղների՝ ռենիումի, սելենի, օսմիումի, տելուրի, վիսմուտի, վոլֆրամի եւ այլնի մաքուր կորզման արտադրութիւն: Բայց դրանց պաշարները արդիւնաբերական են: 2 մլրդ տոն երկաթի եւ միլիոնաւոր տոննաներ այլ մետաղների հաստատուած պաշարների մասին չեմ խօսում: Մասնաւորեցուած Հայաստանը անտեսեց բնական եւ կիսաթանկարժէք քարերի անսահմանափակ հարստութիւնը եւ աչք փակեց մասնաւորի կողմից հանքերի գիշատիչ, քայքայիչ շահագործման վրայ: Խորհրդային Հայաստանում կար Քարի եւ սիլիկատների ինստիտուտ, որը միակն էր ողջ ԽՍՀՄ-ում: Այդ ինստիտուտը հասել էր շշմեցնող արդիւնքների՝ բազալտից թել, կտոր «ամրակապեր, շին-մոնտաժային կոնստրուկցիաներ, ապակի եւ տասնեակ այլ ապրանքներ, իսկ պերլիտից ԽՍՀՄ ՌԱՀ-ի պատուէրով յատուկ արտադրանքներ: Մասնաւորի կողմից այսօր այդ հզօր գիտակենտրոնը վերածուել է աւերակի, իսկ բարձրորակ պերլիտի համաշխարհային պաշարների 65 տոկոսին տիրապետող Հայաստանը այդ դաշտից ամբողջովին դուրս է մղուել: «Հայաստանը աղքատ երկիր է» գիտակցական կարծրատիպի հաստատման հետեւում կանգնած են Արեւմուտքը եւ ՄԱՀ-ը :*

*4. «Հայաստանը չի կարող զարգանալ, քանի դեռ չի լուծուած Արցախի խնդիրը»: Նոյնպէս դրսից մեր վզին փաթաթած ու շատերի համար համոզմունք դարձած, չափազանց վնասաբեր տեսակէտ է: Արցախի հզօր յաղթաթուղթը, որից ոչ միայն Հայաստանը, այլեւ ամբողջ հայութիւնը պէտք է ստանային հսկայական քաղաքական, տնտեսական, բարոյական օգուտներ, տարիներ շարունակ փորձում են ներկայացնել Հայաստանի քայքայման եւ աղքատացման հիմնական պատճառ: Զուտ տնտեսապէս «Արցախը կարող է ապահովել Հայաստանի սննդի 25-30 %: Սակայն այս կարծրատիպը 13-14 տարի, Արցախին դրեց տնտեսական զարգացումից դուրս եւ միայն վերջին 3-4 տարում է նկատւում իրավիճակի փոփոխութիւն: Այնինչ, Հայաստանը, ի հեճուկս դրսի ճնշումների, հրադադարից յետոյ անմիջապէս պէտք է սկսեր Արցախի բնակեցումը, նրա բոլոր ռեսուրսների լայնամաշտաբ, ծրագրային օգտագործումը: Սա է պատերազմների էութիւնը եւ յաղթանակի վերջնական ամրապնդման կանոնը: Իրեն Հայ համարող ամէն մէկը Արցախի մասին դատողութիւններ անելուց առաջ պէտք է ղեկավարուի անբեկանելի երեք իրողութեամբ.*

*1. Այսօրուայ Արցախը մեր Հայրենիքի անբաժանելի մասն է.*

*2. Այսօրուայ Արցախը կայացել է հազարաւոր լաւագոյն հայերի կեանքի գնով.*

*3. Կորցնելով Արցախը, կը կորցնենք Հայաստանը:*

*Սա համոզմունք է ամէն մի ազատամարտիկի համար: Սա պէտք է համոզմունք լինի նաեւ ամէն մի հայի համար: Բայց այստեղ նոյնպէս կան լիբերալ համակարգի եւ իշխանութեան անհեռատես ու անսրտացաւ վերաբերմունքից ծնուած, 17 տարի շարունակուող անարդար քաղաքականութիւն: Ես ճանաչում եմ ազատամարտին մասնակցած բոլոր ջոկատների հրամանատարներին, հազարաւոր ողջ մնացած եւ զոհուած ազատամարտիկների: Ազատամարտիկը ազգի ամենաարժէքաւոր տեսակն է: Ազատամարտիկը թողնում էր տանը առաջնեկին սպասող կնոջը, ծերունի ծնողին, նորածին երեխային, ամուսնացող քրոջը եւ գնում կրակի բերան: Զաւակի նահատակումը հարազատների կողմից ընդունւում էր անտրտունջ եւ արժանապատուօրէն: Յետոյ ի՞նչ կատարուեց: Յաղթելուց յետոյ վերացուեցին պատերազմի մասնակիցների համար սահմանուած արտօնութիւնները: Քիչ ժամանակ անց սկսուեց խիստ վտանգաւոր մթնոլորտ ձեւաւորուել ազատամարտիկների շուրջ, իբր այդ «մօրուքաւորները» խոչնդոտում են երկրի զարգացմանը: Սկսուեց 1988-ին ձեւաւորուած եւ յաղթանակով ամբողջացած հայ ազգի ամենամեծ ձեռքբերման՝ հոգեւոր վերելքի կոտրումը: Դա կատարուեց դրսից պարտադրուած այն տնտեսական քաղաքականութեան իրականացումն ապահովելու հա-*

*Շար.ը էջ 19*

# ԵԼՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ՃԳՆԱԺԱՄԻՑ

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Վերակառուցման ու զարգացման եւրոպական բանկի եւ Համաշխարհային բանկի համատեղ հետազօտութեան տուեալներով, Հայաստանում հիմնական խնդիր է համարւում վստահութեան պակասը: Հետազօտութիւնը ցոյց է տուել, որ մարդիկ ոչ միմեանց են վստահում, ոչ պետութեանը: Դրան կարելի է աւելացնել, որ Հայաստանում մարդիկ չեն վստահում սոցհարցումներին, բիզնես-կանխատեսումներին, ընտրութիւնների արդարութեանը:

Առաջին հայեացքից կարող է թուալ, որ վստահութիւնը զուտ բարոյական-էմոցիոնալ կատեգորիա է, սակայն, գործնականում, վստահութիւնն է ընկած պետութեան սահմանադրական կառուցուածքի հիմքում եւ զուտ քաղաքական կատեգորիա է համարւում:

Սահմանադրութիւնը մեծ համաձայնագիր է երկրի քաղաքացիների միջեւ, որը նրանք պարտաւորւում են կատարել: Կատարում են, քանի որ դա համարում են միասին պարելու ամենաօպտիմալ կանոնները: Հասարակական պայմանաւորուածութիւնների չկատարման համար պատիժը նոյնպէս քաղաքական կատոգորիա է, սակայն այն կիրառւում է միայն խախտումների ժամանակ, իսկ Սահմանադրութեանը հետեւելը իրականանում է վստահութեան հիման վրայ: Այսինքն, նախեւառաջ, պետական կառուցուածքի հիմքում ընկած է վստահութիւնը ղեկավարութեանը, դատարանին, վիճակագրութեանը, շուկային: Նորմալ պետութիւններում վստահութիւնը խաբելու համար խիստ են պատժում:

Մեզ մօտ վստահութիւնը խաբելը, աւելի շուտ, «ճկունութեան» նշան է: Սկսենք նրանից, որ Հայաստանում, ինչպէս յետխորհրդային մի շարք պետութիւններում, բացարձակ վստահութիւն չկայ ընտրական համակարգի նկատմամբ: Այդ պատճառով էլ ընտրութիւնների արդիւնքները դեռ մինչեւ դրանց աւարտը վիճարկւում են ընդդիմութեան կողմից: Հենց ընտրութեան նկատմամբ վստահութիւնը կարող է վերականգնել այլ ինստիտուտների նկատմամբ վստահութիւնը:

Երկխօսութիւնը, որ սկսել է իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ, հնարաւորութիւն է վերականգնել այդ վստահութիւնը: Եթէ յաջողուի պայմանաւորուել արդար ընտրութիւն անցկացնելու վերաբերեալ, այդ դէպքում նշանակութիւն չունի՝ արտահերթ, թէ հերթական կը լինեն դրանք: Որքան էլ ուտոպիական թուայ, նման պայմանաւորուածութիւնը հնարաւոր է, եթէ կողմերն առեւտուր չսկսեն խորհրդարանում տեղերի համար:

Իշխանութեան ու ընդդիմութեան միջեւ սկսուած երկխօսութիւնը կայանալու է բոլորովին նոր պայմաններում, ելնելով մի շարք գործօններից: Առաջին հերթին, Կոնգրէսը ուժ է հաւաքել, եւ միջազգային կազմակերպութիւնների աջակցութեամբ կարող է վերահսկողութիւն հաստատել ընտրական գործընթացի վրայ: Երկրորդ, «Բարգաւաճ Հայաստանը» արդէն չի գիջի իր ձայները ՀՀԿ-ին եւ մինչեւ վերջ կը պայքարի՝ թոյլ չտալով հանրապետականներին կիրառել վարչական ռեսուրսը:

Լեցուն լեռնական հայեր, իրենց կանաչ լեռների հովաշունչ լանջերից հասել էին դեղին աւազուտներ, պատսպարուել իրենց գիւղերի անուններով վրանաթաղերում, վրանաքաղաք էր: Հող չկար մշակելու ու ծառ տնկելու, աղբիւրներ ու գետակներ չկային, իրիկունները լուսնեակի անուշ դէմքին էին նայում, իրենց լեռների ստուերը փնտռելու: Չէին կարողացել համակերպիլ թշնամու դէմ պայքարը դադրեցնելու իրողութեան հետ, համակուած էին թշնամու դէմ ատելութեամբ, վրիժառութեամբ: Աշխարհի պատերազմը դեռ չէր աւարտուել: Մուսալեռցին չէր կարող Փոր Սայիտի աւազների վրայ հանգիստ ճեմել, պատերազմը իրենց համար էլ դեռ չէր վերջացել, դեռ կռիւ ունէին տալու թուրքի դէմ, ազատելու լեռն իրենց, նորէն քայլելու իրենց հողին: Իրենց պատուիրակները դիմել էին Թէքէեանին, զանազան ռազմավարական առաջարկներ ներկայացրել: Փոր Սայիտի նաւահանգիստի ծովային սպայակազմը սկսել էր աւելի մօտիկից հետաքրքրուել իրենցով, ցուցակագրել նրանց, ովքեր կը ցանկանային վրանաքաղաքում զինուորական կրթութիւն ստանալ: Զրահանաւի հրամանատար, կապիտան Բենուա Դ՚Ազին էր ստանձնել այդ պարտականութիւնը, կցորդ ունենալով Տիրան Թէքէեանին: Կարճ ժամանակ անց մի ամբողջ վաշտ մարզուել էր, պատրաստ ռազմական գործողութիւնների, հանդիսացել Լեգէոնի միջուկը:

Փոր Սայիտի Մուսալեռցիների վրանաքաղաքի երեք հոգիանոց պատուիրակութիւն մը, բաղկացած Գաբրիէլ Գազանճեանէն, Մարտիրոս Պոյաճեանէ եւ Սերոբ Գապազեանէ, 1916 թուականի Սեպտեմբերին ներկայացել էին ֆրանսական զրահանաւի հրամանատար՝ Բենուա դ՚Ազիի, յայտնել անոր ֆրանսական բանակին մէջ ծառայելու իրենց փափաքը:

Հրամանատարը խորհրդակցել էր ծովային սպայ, Մուսա Լեռցիների ազատագրութեան գործի մէջ մեծ դերակատարութիւն ունեցած՝ Շառլ Տիրան Թէքէեանի հետ, որը ի միջի այլոց արեւմտահայ բանաստեղծութեան իշխան Վահան Թէքէեանի զարմիկն էր: Նա քաջ ծանօթ լինելով նրանց անվեհերութեանը, թելադրել էր հրամանատարին ընդառաջել լեռնականների փափաքին: Հրամանատարի թելադրութեամբ, Թէքէեանը խմբագրել էր դիմումնագիր մը, որը Պընուա Տ՚Ազզի ուղարկել էր իր զարմիկ՝ պետական նախարար, հայասէր Տընը Քոշէնին: Մինչ այդ, հրամանատարը արտօնել էր Մուսալեռցի դիմումնագրողներին զինուորական վարժանքներ կատարել, զինավարժութեան տիրապետելու համար:

Ֆրանսական կառավարութիւնը համամիտ գտնուելով դիմումնագրին, մէկ ամիս յետոյ Փոր Սայիտ էր գործուղել «Օտար Լեգէոնի» գնդապետ Ռոմիէօ-ին ուսումնասիրել «Արեւելեան Լեգէոն» կազմելու կարելիութիւնը: Նման յորջորջումը նրա համար էր, որ այդ զօրագունդը բաղկացած էր լինելու ոչ միայն հայերից, այլ նաեւ օտարազգիներից: Յետագայում այն կոչուել էր «Հայկական Լեգէոն» նրա մարտիկների մեծամասնութիւնը հայերէ բաղկացած լինելու համար:

1916 թուի Նոյեմբերի 17ին գնդապետ Ռոմիէօ, իր խորհրդական Տիրան Թէքէեանին հետ եկել են Փոր Սայիտի Մուսալեռցիների վրանաքաղաք՝ կազմուելիք լեգէոնի համար կամաւորների արձանագրութիւն կատարել: Արձանագրուել էին վեց հարիւր Մուսալեռցի քաջորդիներ, որոնք էլ կազմել էին «հայկական Լեգէոնի» կորիզը: Նրանց էին միացել երեք հարիւր եգիպտահայեր եւ նոյն թիւով թրքական բանակից ու այլ վայրերից փախստական հայեր:

1917 թուականին Ամերիկայի մէջ նաեւ սկսել էր կամաւորութիւնը: Իրենց ցեղին վրէժը, հարազատն երի կորուստի ցաւը սրտերում՝ Քեսապցի, Սեբաստացի, Խարբերդցի, Արաբկիրցի եւ այլ բնակավայրերի ծնունդ հինգ հազար երիտասարդներ էին կամաւորագրուել: Նոյն տարին, Ֆրանսայի Մարսէյլ նաւահանգիստ էին հասել նրանցից միայն հազար երկու հարիւր կամաւորներ, որոնցից ոչ բոլորն էին ժամանել Կիպրոս՝ միանալու արդէն այնտեղ գտնուող Մուսալեռցի եւ այլ կամաւորներու: Նրանց հետ եղել էին զինուորական որոշ աստիճաններ ունեցողներ, ինչպէս՝ Ճիմ Ջանգալեան, Ռուբէն Հերեան, Վաղարշակ Վարդապետ Արշակունի, Ճան Շիշմանեան:

Այդ է պատմական ճշմարտութիւնը, իրենց լերան կռուին մասնակից վեց հարիւր Մուսալեռցի քաջազուններն էին յղացել «Հայկական Լեգէոն» կազմելու առաջարկը, որոնք մասնակցել էին Արարայի բարձունքի նուաճման գրոհին եւ Կիլիկիայի ազատագրութեան մարտերին, որոնց թւում եղել էր տասնապետի (կապորալ) զինուորական կոչումի արժանացած Արմենակ հայրս: Նրանց շատերի խրոխտ հայեացքները, ակներից քաջութեան հուր ժայթքող պայծառ դէմքերը դրոշմուած են մնում սրտիս ալեկոծ կարմիր ծովակի փրփուրներին, երանութեան անուրջներ պարգեւելով ինձ:

Արեւորդի Արմէն-Հայեր, իրենց հազար-հազար տարիների պատմութեան ճանապարհին քաջութեան բազում գործեր էին կատարել, որոնց պատմահայր Մովսէս Խորենացին յիշատակել էր իր Մեռուժանին, Վահանին, Վասակին, Վեստ Սարգիսին սերունդների պարսաւանքին արժանացնելու համար: Թմբուկով, երգով ու պարով տօնենք յոբելեանները հայոց մեծերի, յիշատակութեան արժանի իրենց սխրանքներով փառք բերին իրենց ցեղին: Ինչո՞ւ հայերը իրենց մայր ոստանի հրապարակներում չեն տօնախմբում հայոց Նահապետ Հայկի մ.թ.ա. 2492 թուականի յաղթանակը հայոց աշխարհը նուաճելու եկած Բելի դէմ, հայոց նահապետների Արամի, Արայի, հայկազուն արքաներ Արամայիսի, Արտաշէսի ու նրա զարմից Արքայից Արքայ Տիգրանի եւ բոլոր նրանց որոնք իրենց քաջ գործերով իրենց արարչական ցեղի յարատեւութեանը նպաստել են: Ո՞ր իմաստունը «Ազգապատումի» նման մատեան պիտի արարի, իրենց քաջ գործերով յիշատակութեան արժանի արեւորդիներին ցեղի հետ յաւերժութիւն տանելու:

Շառլ Տիրան Թէքէեան, յիշատակութեան արժանի արեւորդի, կազմակերպել է իրենց լեռներ կռուի ելած 4200 Մուսա Լեռցի լեռնականների տարահանումը Եգիպտոս: Համառօտ պատմեմ նրա մասին:

Ծնուել է 1887 թուականին Ֆրանսա, Մարսէյլ քաղաք, բնիկ Կեսարացի ծնողներից: Ուսումնառութեան մեկնել է Վենետիկ Մխի-

Շար.ը էջ 19

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինկս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

# ՂԱԶՈՒԻՆԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԷ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ



*ՅՈՎԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ*

Ուխտագնացութիւնը Հայ Եկեղեցու բարեպաշտական սովորութիւններից մէկն է, որով հաւատացեալն իրեն լիցքաւորում է Ս. Հոգու շնորհներով:

Դարեր շարունակ Հայ Եկեղեցին կազմակերպել է ուխտագնացութիւններ՝ դէպի սրբավայրեր, ուր հաւատացեալները եկեղեցիների անուանակոչութեան առիթով ուխտի են գնացել եւ ամրապնդել իրենց կապը՝ Աստծու հետ:

Թեհրանի հայոց թեմում եւս կան բազմաթիւ ուխտատեղիներ, ուր անուանակոչութեան տօների առթիւ կազմակերպւում են ուխտագնացութիւններ:

Այդ ուխտավայրերից մէկը Ղազուինի Ս. Հռիփսիմէ եկեղեցին է, որը կառուցուել է 1936 թուականին՝ Յովհաննէս եւ Վարդենի Բարսեղեանների բարերարութեամբ՝ ի յիշատակ իրենց վաղամեռիկ դստեր՝ Հռիփսիմէի, ուր ամէն տարի Ս. Հռիփսիմէի տօնին կազմակերպւում է ուխտագնացութիւն:

Այս տարի եւս, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Արք. Սարգսեանի նախագահութեամբ, ուխտագնացութիւն տեղի ունեցաւ Ղազուինի Ս. Հռիփսիմէ եկեղեցի, որի հիմնադրութեան 75-ամեակն է լրանում այս տարի:

Ուխտագնացութիւնը կայացաւ Ս. Հռիփսիմէի տօնի օրը՝ Երկուշաբթի, Յունիսի 20-ին: Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ՝ Թեհրանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ատենապետ Տ. Վարագդատ Աւ. քհնյ. Տէրտէրեանի, Տ. Վազգէն քհնյ. Շմաւոնեանի, Տ. Մաշտոց քհնյ. Խաչատրեանի, Տ. Սահակ քհնյ. Խոսրովեանի եւ Տ. Արիստակէս քհնյ. Շամիրեանի, Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետ Գէորգ Աբուլեանի եւ Թեմական խորհրդի անդամ Ռուբէն Շահվերդեանի, առաւօտեան ժամը 10-ին ժամանեց եկեղեցի: Մուտքի մօտ Սրբազան Հօրն ու իր ընկերակիցներին դիմաւորեցին եկեղեցու խորհրդի անդամները եւ մեծ թուով ուխտաւորներ: Ղազւինաբնակ միջնակարգի առաջին դասարանի աշակերտուհի Սելին Բարսեղեանը մի գեղեցիկ ծաղկեփունջ յանձնելով Սրբազան Հօրը՝ բարի գալուստ մաղթեց նրան:

Ուխտի Ս. պատարագը մատուցեց Տ. Սահակ քհնյ. Խոսրովեանը, որին սպասարկում էին՝ Արին Սրկ. Բաբախանեանը եւ Վահիկ Եղիայեանը: Պատարագի երգեցողութիւնը կատարում էր Թեհրանի Ս. Գէորգ, Ս. Սարգիս եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիների երգեցիկ խմբերից բաղկացած երգչախումբը՝ ղեկավարութեամբ Օֆիկ Մելիքեանի եւ երգեհոնի նուագակցութեամբ Մելանիկ Մկրտչեանի: Երգեցիկ խմբի հոգեպարար կատարումները շուք տալով պատարագի արարողութեանը՝ մեծապէս շեշտաւորեցին տիրող հոգեւոր մթնոլորտը եւ հոգեկան վայելք պատճառեցին ներկայ բազմահարիւր ուխտաւորներին, որոնց թիւը, անցեալ տարիների համեմատ, զգալիօրէն աճ էր արձանագրել:

Յընթացս Ս. պատարագի, Տէրունական աղօթքից առաջ, քարոզեց Սրբազան Հայրը: Նա նախ Ս. Հռիփսիմէի տօնը շնորհաւորեց ուխտաւորներին եւ ապա մանրամասնօրէն ներկայացրեց Ս. Հռիփսիմէ կոյսի կեանքն ու նահատակութիւնը:

Սրբազան Հայրն իր քարոզի մէջ նշեց, որ Հռիփսիմեան կոյսերը Հռոմի Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից խոյս տալով՝ անցնում են Հայաստան՝ Տրդատ Գ թագաւորի օրօք: Նրանք, Գայիանէ կոյսի գլխաւորութեամբ, քրիստոնէութեան բուռն քարոզչութիւն են տանում: Այդ իսկ պատճառով՝ ենթարկւում են սաստիկ հալածանքների: Տրդատ թագաւորը ամէն կերպ աշխատում է Հռիփսիմէին տարհամոզել իր հաւատքից, սակայն նա ուժեղ հաւատքով ամրացած՝ ընդդիմանում է, որի հետեւանքով՝ Տրդատ թագաւորի հրահանգով՝ չարչարալից մահով նահատակւում է՝ Գայիանէի եւ միւս կոյսերի հետ:

Սրբազան Հայրն իր քարոզի շարունակութեան մէջ յայտնեց, որ Խոր Վիրապից դուրս գալուց յետոյ՝ Գրիգոր Լուսաւորչի առաջնահերթ գործերից մէկն է լինում Հռիփսիմեանց կոյսերի մարմինները հողին յանձնելը եւ նրանց վրայ վկայարաններ կառուցելը: Հետագայում, 7-րդ դարում, այդ վկայարանների վրայ կառուցւում են եկեղեցիներ: Ս. Հռիփսիմէի տաճարը կառուցւում է Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի միջոցով, իսկ Ս. Գայիանէի տաճարը՝ Եզր կաթողիկոսի: Հռիփսիմեանց եւ Գայիանեանց կոյսերի նահատակութիւնը սերտօրէն առընչւում է Հայաստանում քրիստոնէութեան պետականօրէն ճանաչման հետ: Ս. Հռիփսիմէի եւ Ս. Գայիանէի տաճարների ներքեւում գտնւում են նահատակուած կոյսերի շիրիմները, ուր այցելում են հազարաւոր ուխտաւորներ եւ հաղորդւում կոյսերի յիշատակով:

Քարոզի մի այլ բաժնում Սրբազան Հայրը բարձր գնահատեց Ղազւինի Ս. Հռիփսիմէ եկեղեցու բարերար Յովհաննէս Բարսեղեանի ազգանուէր ու աստուածահաճոյ արարքը, որով ղազուինահայ համայնքին օժտեց եկեղեցով, նաեւ ոգեկոչեց Ղազւինի երկարամեայ հոգեւոր հովիւ Տ. Յարութիւն աւ. քհնյ. Տէր-Մեսրոպեանի յիշատակն ու գնահատանքով վեր հանեց նրա աւելի քան 50-ամեայ հոգեւոր վաստակը՝ Ղազուինում:



Պատարագի ընթացքում ուխտաւորները, խոստովանանքից յետոյ, հաղորդութիւն ստացան:

Պատարագից յետոյ՝ հոգեհանգստեան արարողութիւն կատարեց եկեղեցու բարերար Յովհաննէս Բարսեղեանի ու նրա հարազատների եւ Տ. Յարութիւն աւ. քհնյ. Տէր-Մեսրոպեանի յիշատակին՝ վերջինիս վախճանման 30-րդ տարելիցի առթիւ:

Արարողութիւնից յետոյ՝ Սրբազան Հայրը, իր ընկերակիցները եւ երգեցիկ խումբը հիւրընկալուեցին Ղազւինի Եկեղեցա-դպրոցական հոգաբարձութեան անդամների կողմից, որի ընթացքում Եկեղեցա-դպրոցական հոգաբարձութեան անունից տկն. Անահիտ Սարգսեանը բարի գալուստ մաղթեց առաջնորդ Սրբազան Հօրն ու նրա ուղեկիցներին: Հիւրընկալութեան ընթացքում արտայայտուեցին՝ Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետ Գէորգ Աբուլեանը եւ Կրօնական խորհրդի ատենապետ Տ. Վարագդատ աւ. քհնյ. Տէրտէրեանը:

Կէսօրից յետոյ եկեղեցու շրջափակում ուխտաւորներն ունեցան խրախճանքի պահեր: Այդ ընթացքում ասմունքեցին «Հայ կին» միութեան կից «Անի» եւ «Արմենուհի» միութիւնների նախագահուհիներ՝ Նազիկ Մանասեանը եւ Վիկտորիա Աղասեանը, հերթաբար՝ Վահան Թեքէեանի «Եկեղեցի հայկական» եւ Յովհաննէս Շիրազի «Ես իմ Մասիս սարն եմ պաշտում» բանաստեղծութիւնները: Ուխտաւորներից մի քանիսը կամաւորաբար ասմունքեցին, նաեւ ակորդէոնով եւ դհոլով ու երգեցողութեամբ ուխտաւորներին հաճոյալից պահեր պարգեւեցին՝ Ռաֆիկ Ծատուրեանն ու Ժոռա Խուդաբախշեանը: Այդ ժամանակ նաեւ տօնեց ուխտաւոր ամուսիններ՝ Նորիկ եւ Թամար Ալեքսանեանների ամուսնութեան 50-ամեակը, որոնք ստացան Սրբազան Հօր օրհնութիւնները:

Նշենք, որ ուխտագնացութեանը մասնակցել ու իրենց համագործակցութիւնն էին ցուցաբերել՝ «Հայ կին» միութեան կից «Անահիտ», «Արմենուհի» եւ «Անի» միութիւնները, Թ. Հ. Կ. Եկեղեցասէր միութիւնը, Աշխարհատեսների հայկական կենտրոնը, Ս. Թարգմանչաց եկեղեցու Կանանց եկեղեցասէր եւ Փերիոյ Կրթասիրաց միութիւնները, որոնց միջոցով Ղազուին ժամանած ուխտաւորների թիւը աւելի քան 600 հոգի էր:

Ուխտաւորները, երեկոյեան ժամը 5-ին, լիցքաւորուած օրուայ խորհրդով եւ հոգեկան մեծ բաւարարութեամբ, թողեցին եկեղեցու շրջափակը՝ ուղեւորուելով Թեհրան:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104




**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# «ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ»

ԳԷՈՐԳ ԱՂԱՊԱԼԵԱՆ

Այսօր գիտութեան համար ամենակարեւորագոյն հարցը՝ դա տիեզերքի առաջացումն է: Ներդրւում են միլիարդաւոր տոլարներ, նորագոյն տեխնոլոգիաներ եւ սակայն արդիւնքում տարբեր վարկածներից որեւէ վերջնական գիտական տեսակէտ չի առաջանում: Եւ չի կարող առաջանալ՝ քանի որ մասնիկային տեսակէտ արտայայտող տրամաբանութիւնից բացի, որեւէ այլ տրամաբանական տեսակէտ չի քննարկւում: «Տարածութեան տեսութիւնը» թէեւ վերլուծական հիմքի վրայ կառուցուած տեսակէտ է, եւ մենք տիեզերքին նայել ենք միայն անզէն աչքերով, այնուամենայնիւ նրա վերլուծական հետեւութիւնները համընկնում են ինչպէս մաթեմատիկական տրամաբանութեանը, այնպէս էլ տիեզերքի այն իրական պատկերին, որը իրենց դիտարկումների արդիւնքում ստացել են աստղագէտներն իրենց երկրային եւ տիեզերական («Հաբլ») աստղադիտակների միջոցով (որպէս փաստացի ապացոյց կարելի է համեմատել ամերիկեան աստղագէտների վերջին դիտարկումների հիման վրայ պատրաստուած տեսաերիզի հետ) եւ որը այդպէս էլ չեն կարողանում հիմնաւորուած կերպով բացատրել՝ ստիպուած օգտագործւում են յստակ բացատրութիւն չունեցող «մութ մատերիա», «մութ էներգիա», «մութ խոռոչ», «մեծ սառնութիւն» եւ այլ տերմիններ:

Մարդը կենդանական աշխարհից տարբերւում է իր ստեղծագործ մտքով եւ նրա արդիւնքներով՝ որը անուանում ենք ՄՇԱԿՈՅԹ: Մշակոյթն է մարդկային քաղաքակրթութեան հիմքը, եւ մարդկային հասարակութեան մէջ տարակարծութիւններ առաջանալու դէպքում պէտք է միշտ նկատի ունենալ մշակութային գործօնն ու պէտք է միշտ առաւելութիւն տրուի մշակոյթին նպաստող ուղղութեանը, եւ որը կը լինի իրական մարդկային քաղաքակրթութեան արտայայտում: Այսօր քաղաքակրթութիւնը կշեռքի նժարի վրայ է դրել երկու հարց՝ տարածքային ամբողջականութիւնն ու ազգի ինքնորոշման իրաւունքը: Եթէ մենք իսկապէս տրամաբանօրէն վերլուծենք այս երկու ուղղութիւնները, ապա կարող ենք ասել, որ ցանկացած ազգ ունի մշակոյթ, որը նաեւ համամարդկային մշակոյթի մէկ մասն է եւ ազգի ինքնորոշման իրաւունքը դա մշակոյթը գնահատող ու նրա զարգացմանը նպաստող ուղղութիւնն է, իսկ տարածքային ամբողջականութիւնը՝ դա ինչ որ հատուածի գերիշխող դիրք ունենալն է մէկ այլ հատուածի նկատմամբ, որին ստիպողաբար թելադրւում է թէ ինչ անել, ինչ մշակոյթ ունենալ: Երբ մենք տարածքային ամբողջականութիւնը համեմատում ենք որոշակի տարածքում ապրող գիշատիչ գազանների վերաբերմունքի հետ իրենց տարածքների նկատմամբ՝ որի սահմանները նրանք պարբերաբար յստակեցնում են եւ պայքարում են այդ տարածքների ամբողջականութեան համար, ինչպէս նաեւ այդ տարածքում ապրող կենդանդանական աշխարհի միւս ներկայացուցիչների նկատմամբ նրանց վերաբերմունքի հետ (երբ կուշտ են ապա չեն խանգարում նրանց ապրելակերպին, սակայն երբ սովածանում են), ապա որեւէ էական տարբերութիւն չի նկատւում: Ազգի ինքնորոշման իրաւունքը պէտք է ունենայ առաւելութիւն, իսկ տարածքային ամբողջականութիւնը կարելի է ընդունել միայն այն դէպքում՝ երբ այն նպաստում է մշակոյթի զարգացմանը եւ ոչ թէ ոչնչացնում է այն եւ եթէ այն նպաստում է մշակոյթի զարգացմանը եւ ոչ թէ խոչընդոտում՝ ապա ազգի մօտ ինքնորոշման զգտում չի առաջանում: ՄԵՆՔ հազարամեակների ընթացքում միշտ ունեցել ենք մեր ներդրումը համամարդկային մշակոյթի զարգացման մէջ՝ երբեք այն չդարձնելով սակարկութեան առարկայ: Եւ ՄԵՆՔ ունենք ինքնորոշման ու տարածքային ամբողջականութեան իրաւունք (մշակոյթի օճախը՝ պետութիւն կը լինի, ազգ թէ օպերայի չէնք կամ յուշարձան, գոյութեան իրաւունք ունի եւ այն չի կարելի աւերել կամ դարձնել աղբանոց) ու պարտաւոր ենք քաղաքակրթութեան քաղաքականութիւնը ձեւաւորող քաղաքագէտներին բացատրելու այդ համամարդկային իրաւունքը: Ի տարբերութիւն որոշ կառոյցների՝ պետութիւն կը լինի թէ կազմակերպութիւն, որոնք բնութեան արդիւնքն են վաճառում եւ իրենց համաշխարհային կարեւորութեան կառոյց համարում, ՄԵՆՔ մարդկութեանը մեր մտքի արդիւնքն ենք նուիրաբերում, որը ոչ պակաս միլիարդներ արժէ: Մի գուցէ սա պէտք է հասկացնել եւ որ մեզ գնահատեն: Իսկ դրա համար ՄԵՆՔ պարտաւոր ենք միաւորուելու եւ ԻՆՔՆԵՐՍ լուծելու «Համաշխարհային Ազգ Դառնալու Հիմնախնդիրները» (Յակոբ Փանոսեան եւ «ԱՍՊԱՐԷԶ» եւ Յունիս 14, 2011): Մեր բոլոր բռնագրաւուած տարածքներում իւրացւում կամ ոչնչացւում է մեր մշակոյթը՝ կասեցնելով մշակոյթի զարգացումը, ու տարածքները վերածելով մշակութային անապատի: Աշխարհն այդ մասին լռում է՝ հաւանաբար փոքր մշակոյթ են համարում եւ Փարիզում, «ՅՈՒՆԵՍՔՕ» եւ լուռ համաձայնութեամբ, արգելուեց խաչքարերի հայկական ծագման մասին յիշատակումը: Այսօր մեծ է հաւանականութիւնը, որ մեր ազատագրուած տարածքները յանձնեն մշակութային անապատներ ստեղծողներին թէեւ բարձրաձայն ժխտւում են նման բանակցութիւնները, սակայն մեր յիշողութեան մէջ չի ջնջուել Ապրիլի 23-ի գիշերը: Աշխարհը գնահատում է փողը եւ ամէն ինչ փորձում է վերածել բիզնեսի: Մենք մտաւոր ազգ ենք, եւ միգուցէ ճիշտ կը լինի որ ՄԵՆՔ էլ մեր մտքի արդիւնքը դարձնենք բիզնես եւ ասենք՝ մենք ձեզ մեր մտքի, մեր մշակոյթի արդիւնքը, իսկ դուք մեզ թողէք մշակոյթ ստեղծող մեր տարածքները, մի թողէք որ այն վերածուի մշակութային անապատի:

«Տարածութեան տեսութիւնը» դա մեր մտքի արդիւնքն է եւ մի գուցէ հնարաւոր կը լինի այն դարձնել բիզնեսքաղաքականութեան խաղաքարտ: Այն գրեթէ աւարտուն վիճակում է՝ եւս երեք-չորս ամիս եւ այն պատրաստ կը լինի ամբողջութեամբ հրատարակուելու, իսկ մինչ այդ, որոշ նկատառումներից ելնելով նրա հիմնական հինգերորդ մասը, որն իրենով մէկ ամբողջութիւն է դարձնում բոլոր հնարաւոր բացատրութիւնները եւ այդ ամէնը արտայայտում է նաեւ գրաֆիկ պատկերների տեսքով, չենք բացայայտում: Սակայն կարող ենք հնարաւորութեան դէպքում՝ տեսաերիզը դիտելուց յետոյ գրաֆիկ պատկերների ցուցադրման միջոցով այն դարձնել հասկանալի: Յուլիս ամսին (20-ին) մենք գնում ենք Հայրենիք՝ այնտեղ աւարտելու, թարգմանելու ու նաեւ առանձին հրատարակելու համար եւ մենք որեւէ գիտական կազմակերպութեան անդամ չենք եւ «տարածութեան տեսութիւնը» չի պատկանում որեւէ կազմակերպութեան՝ այն պատկանում է Հայրենիքին:



## ՍԹՐԵՍՆԵՐՆ ՈՒ ՆԵՎՐՈԶՆԵՐԸ ԿԱՆԽՈՒՄ ԵՆ
### ՈՒ ԴԱ ԱՐՒՈՒՄ Է ՊԱՂՊԱՂԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Երեւի թէ չկայ մի մարդ, որը բացայայտած չլինի պաղպաղակի հրաշալի համը: Եւ գուցէ շատերի համար ցնցող լինի այն լուրը, որ Լոնտոնում կարելի է համտեսել պաղպաղակ, որի հիմնական բաղադրիչն է կրծքի կաթը: Այս զարմանահրաշ նորամուծութիւնը ունի նոյնիսկ սեփական անուանումը՝ «Բեբի Գագա», որի բաղադրութեան մէջ առաջին հերթին մտնում են կրծքի կաթը, այնուհետեւ՝ վանիլը եւ կիտրոնը: Իսկ այն կինը, ով կաթ է տրամադրում պաղպաղակի համար՝ ամէն 100 գրամի դիմաց ստանում է 15 ֆունտ պարգեւատրում:

Ըստ ՀՀ կաթնամթերք արտադրող ընկերութիւնների տուեալների՝ պաղպաղակներում եւ մնացած արտադրանքներում օգտագործում են որակեալ, էկոլոգիապէս մաքուր բնական կաթ, որը հարուստ է կալցիումով (օգտակար է ոսկրերի եւ ատամների ձեւաւորման եւ զարգացման, արեան ճնշման կարգաւորման, մկանային եւ նեարդային համակարգերի նորմալ կենսագործունէութեան համար, եւ ոչ մի ուրիշ տարր չի կարող նպաստել կալցիումի տարրալուծմանն այնքան լաւ, որքան հենց կաթում պարունակուող մնացած տարրերը, սպիտակուցներով ապահովում են օրգանիզմին անհրաժեշտ բոլոր տեսակի ամինաթթուներով, նպաստում է օրգանիզմի աճին, օգտակար է քաշի կառավարման համար, բարձրացնում է դիմադրողականութիւնը, նպաստում է մկանների զարգացմանը եւ ապաքինում վնասուած հիւսուածքները), վիտամիններով (օրինակ՝ վիտամին B-ն անհրաժեշտ է նեարդային համակարգի նորմալ գործունէութեան համար, օգտակար է աչքերի եւ մաշկի համար, պայքարում է սթրեսների դէմ եւ հանում յոգնածութիւնը, վիտամին A-ն օգտակար է մաշկի, տեսողական եւ նեարդային համակարգերի համար, վիտամին D-ն մեր օրգանիզմի աճի համար կարեւոր տարր է, եւ այլն), ֆոսֆորով (ամուր ոսկորների եւ ատամների ձեւաւորման հիմքն է, կենսական դեր ունի արեան բաղադրութիւնում, նեարդային եւ ֆերմենտային համակարգերում), կալիումով (օգտակար է նեարդային ազդակների ակտիւ փոխանցման համար, արեան ճնշման կարգաւորման համար, բազմաթիւ ֆերմենտների հիմքն է, մագնեզիումով (օգնում է օրգանիզմում կալցիումի կլանմանն ու պահպանմանը, ոսկրերի եւ ատամների հանքանիւթային կառուցուածքի կարեւորագոյն տարրն է), ցինկով (նպաստում է օրգանիզմի ընդհանուր աճին եւ զարգացմանը, վէրքերի լաւացմանը եւ կանխում է սեռական խնդիրների առաջացումը, ապահովում ուժեղ իմունային համակարգ:

Սակայն, իր բոլոր դրական յատկութիւններով հանդերձ, պաղպաղակը կարող է նաեւ վնաս հասցնել մարդու առողջութեանը: Այն պարունակում է մեծ քանակութեամբ ճարպ, շնորհիւ որի՝ այդքան համեղ է:

Պաղպաղակը երկար տարիների պատմութիւն ունի: Այն յօրինուել է ոչ թէ հիւսիսային երկրներում, այլ՝ հարաւային, ինչպիսին է Հին Չինաստանը: Այնտեղի բնակիչները խառնում էին նարնջի կտորները հիւթալի մրգերի հետ, դրանց աւելացնելով սառոյց, որն էլ գուցէ առաջին բաղադրատոմսն էր: Երկար ժամանակ պահանջուեց, որպէսզի այդ գիւտը տարածուի ամբողջ Եւրոպայով:

Պաղպաղակը երեխաների թուլութիւնն է: Սակայն ծնողները պէտք է յիշեն, որ երեք տարեկանից փոքր երեխաներին պաղպաղակ ուտելն արգելուած է: Ի դէպ, տնային պայմաններում պատրաստուած պաղպաղակն աւելի օգտակար է, քանի որ այն աւելի բնական եւ առողջ սնունդ է մարդու օրգանիզմի համար՝ առանց աւելորդ յաւելումների եւ տարբեր կայունացուցիչների, որոնք վտանգաւոր են յատկապէս փոքր հասակի երեխաների համար:

Պաղպաղակը հակասթրեսային եւ հականեւրոզային յատկութեամբ է օժտուած: Այն կաթի շնորհիւ պարունակում է տրիպտոֆան կոչուող բնական տարրը, որը հանգստացնում է ամբողջ նեարդային համակարգը եւ պարգեւում հաճելի զգացողութիւն, որը հնարաւոր չէ զգալ բուսական իւղերով պատրաստուած պաղպաղակ ճաշակելիս: Քանի որ պաղպաղակը դասւում է շուտ փչացող ապրանքների շարքին, կարող է սննդային թունաւորման պատճառ դառնալ:

Պաղպաղակը էներգիայի մեծ աղբիւր է: Մասնագէտները խորհուրդ են տալիս օգտագործել յատկապէս բալից պատրաստուած պաղպաղակը, որովհետեւ բալը պարունակում է 20% կալցիումի, շաքարների, օրգանական թթուների, պեկտինների, խողի, կալիումի, լեւուլոզայի, կարոտինի, պրովիտամին A-ի, վիտամիններ B1, B2, C, E, PP-ի օրական անհրաժեշտ չափաբաժին: Բալից պատրաստուած պաղպաղակը խորհուրդ է տրւում օգտագործել ճարպակալման, գիրութեան, սրտի իշեմիկ հիւանդութեան, հիպերտոնիայի, երիկամային քարերի եւ շաքարային դիաբետի հիւանդութիւնների դէպքում: Իսկ բալի պոչից պատրաստուած թէյերը կ՚օգնեն ճնշման խնդիրների, երիկամային որոշ հիւանդութիւնների, ինչպէս նաեւ գիրութեան առկայութեան դէպքում: Մէկ պաղպաղակը կարող է պարունակել 100-300 կալորիա: Մասնագէտներ նշում են, որ մարդու օրգանիզմի համար վտանգ կարող են առաջացնել ժելատինով, կայունացուցիչներով, ներկանիւթերով եւ տարբեր համային յաւելումներով պաղպաղակները, որոնք սովորաբար անհրաժեշտ են համեղ, նրբահամ եւ գրաւիչ պաղպաղակ ստանալու համար:

### «ԱՐԵՒԱՅԻՆ» ԼՈԳԱՆՔԸ ՆԱԵՒ ՕԳՏԱԿԱՐ Է

Գիտնականներն ապացուցել են, որ «արեւային» լոգանքները ոչ թէ վնասակար են, ինչպէս կարծում են շատ շատերը, այլ նոյնիսկ կարող են օգտակար լինել: Ապացուցուել է, որ արեւի տակ օրական միջինը երեք ժամ անցկացնելով՝ կարելի է 50%-ով կրճատել կրծքագեղձի քաղցկեղի զարգացման հաւանականութիւնը:

Վերջին գիտական աշխատանքների վերլուծութիւնը ցոյց է տուել, որ արեւն ունի հակաքաղցկեղային ազդեցութիւն, քանի որ այն խթա-

Շար.ը էջ 19

## ՄԱՐՄԻՆԸ ԵՐԲԵՔ ՉԻ ՍՏՈՒՄ

Պարզապէս պետք է հասկանալ նրա լեզուն

Եթէ մենք՝ հասարակ մահկանացուներս, մարդու մասին որոշակի կարծիք կարող ենք կազմել միայն նրա հետ երկար ժամանակ շփուելուց յետոյ, ապա հոգեբաններին մարդուն նկարագրելու համար բաւական է միայն տեսնել նրա ձեռագիրը եւ յատկապէս ստորագրութիւնը:

Ձեռագրաբան Սամուէլ Խաչատրեանն ասում է, որ մարդը գրելիս փորձում է աւելի գեղեցիկ, ընթեռնելի գրել, այդ պատճառով էլ ձեռագիրը մարդու «ես»-ը լիովին չի բացայայտում: Ըստ նրա՝ ստորագրութիւնը ասում է շատ աւելին, որովհետեւ տարիների ընթացքում մարդը ստորագրում է անգիտակցաբար, եւ ստորագրութեան մէջ երեւում են բնաւորութեան հիմնական գծերը: Հնարաւոր է՝ տարիների ընթացքում ստորագրութիւնը փոփոխուի, բայց հիմնական կառուցուածքը կը մնայ նոյնը: Ստորագրութեամբ կարելի է որոշել՝ մարդը զգացմունքային է, թե գործունեայ: Ստորագրութեամբ երեւում է՝ որքանով է տուեալ անձնաւորութիւնը հաւասարակշռուած, որքան բարձր է նրա ինքնագնահատումը եւ արդեօք նա ներդաշնա՞կ է ինքն իր հետ: Պարոն Խաչատրեանն ասում է, որ իրեն յաճախ տալիս են աշխատանքի նոր ընդունուածների ստորագրութիւնները, եւ ինքն ասում է՝ որքանով է տուեալ մարդը համապատասխանում այդ աշխատանքին: Ըստ նրա՝ եթէ տառերը աջ թեքութեան են, ուրեմն մարդը զգացմունքային է, ձախ թեքութիւն ունեցող տառերը ցոյց են տալիս մարդու ռացիոնալ մտածողութիւնը, ուղիղ տառեր գրող մարդիկ էլ հաւասարակշռուած են: Եթէ տառերը փոքր են, նշանակում է մարդը կենտրոնացած է իր գրելու վրայ, թէեւ չի բացառւում, որ նա պարզապէս ագահ է: Մեծ տառերով գրող մարդիկ, որպես կանոն, շռայլ են:

Մարդուն կարելի է բնութագրել նաեւ ժեստերի միջոցով: Հոգեբան Ռուբէն Պօղոսեանն ասում է, որ իրենց մօտ յաճախ գալիս են մարդիկ, ովքեր զրոյցի ընթացքում կծկում են իրենց մատները: Այդ ժեստը նշանակում է, որ նրանք կամ ստում են, կամ որեւէ բան պարզապէս թաքցնում են: Նոյնը կարելի է ասել նաեւ այն մարդկանց մասին, ովքեր զրոյցի ընթացքում խուսափում են նայել զրուցակցի աչքերի մէջ: Եթէ մարդու հայեացքը դէպի վեր է ուղղուած, ուրեմն նա ինչ-որ բանի մասին է խորհում: Շատերն ունեն քթի ծայրին դիպչելու սովորութիւն. դա նշանակում է, որ մարդու մէջ առաջացել է դիմացինին հաճոյախօսութիւն անելու ցանկութիւն: Աւելի ինքնամփոփ մարդկանց յատուկ է ձեռքերը յաճախ խաչաձեւելը: Ընկերասէր, մարդամօտ մարդիկ սիրում են զրոյցի ընթացքում խօսակցին աւելի մօտ լինել, իսկ այն մարդիկ, ովքեր նաեւ դիպչում են խօսակցին, ուրեմն ջերմութեան կարիք ունեն:

Պարոն Պօղոսեանը կարծում է, որ հայերին աւելի յատուկ է յուզականութիւնը, եւ նա մարդկանց խորհուրդ է տալիս իրենց յոյզերն արտայայտել, որովհետեւ նման դէպքերում դեպրեսիայի հաւանականութիւնը նուազում է: Եւ վերջում հոգեբանն ասաց, որ նոյնիսկ այն դէպքում, երբ մարդը ստում է, որքան էլ նա ցանկանայ, միեւնոյն է՝ նրա մարմինը երբեք չի ստի:

Հ. Գ. Զրոյցի վերջում խնդրեցի ձեռագրաբանին նայել ստորագրութիւնս, ու թէեւ նախկինում երբեք սպորտային հակումներով աչքի չէի ընկել, սակայն, յուրախութիւն ինձ, իմացայ, որ ես զարմանալիօրէն մարտնչող եւ սպորտային անձնաւորութիւն եմ:

ԼԻԼԻԹ ՅԱԿՈԲԵԱՆ

## ԱՄԱՌ. ՇՈԳ, ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Ողջ տարին անհամբերութեամբ ենք սպասում ամրանը:

Բոլորս էլ ձմրանը գէթ մէկ անգամ բացականչել ենք՝ «Երբ է ամառը գալու»: Սակայն, ամէն ամառ էլ հասկանում ենք, որ դժուար է լինելու ու տարեցտարի աւելի ու աւելի դժուար է լինում ամրանը դիմանալը: Իւրաքանչիւր օր չգիտես ինչի սպասել. մերթ մրսում ենք, մերթ էլ խեղդւում տապից: Այդ բնական վայրիվերումներին դիմանալու համար կարելի որոշ սրբագրումներ մտցնել մեր կենցաղում, հետեւենք մի քանի խորհրդի, որ ամառը մեզ բաւականութիւն պատճառի.

Խորհուրդներ

1.Գուցէ տարօրինակ թուայ, սակայն ամրանը ջուրը չարաշահել չի կարելի: Հեղուկի մեծ քանակը ծանրաբեռնուածութիւն է ստեղծում երիկամների համար: Մեզի հետ օրգանիզմից դուրս են գալիս էլեկտրոլիտներ ու աղեր: Էլ չասած, որ հնարաւոր է ճնշման տատանումներ առաջանան:

Որքան ջուր է հարկաւոր խմել. օրուայ նորմը որոշելու համար մարմնի իւրաքանչիւր կգ-ի դիմաց 30 մլ աւելացրէք. ինչ որ ստացուի, դա էլ կը լինի օրգանիզմին անհրաժեշտ ջրի օրաբաժինը: Սակայն չի նշանակում, որ այդ քանակը միանգամից պէտք է պարպէք. խմէք ոչ մեծ չափաբաժիններով, կում առ կում:

2. Շոգին քաղցր ու սառն ըմպելիքներ մի օգտագործէք, քանի որ բոլոր այդ ըմպելիքները մեծ քանակով շաքար են պարունակում, կը նշանակի, կառուցուածքը վտանգուած է:

Եթէ դուք օրական ինչ որ քանակով քաղցր ըմպելիք էք օգտագործում, նշանակում է կիրառում էք դիւրամարս շաքար, բացի այդ սառը հիւթերը կարող են անգինայի պատճառ դառնալ ու թուլացնել իմունիտետը: Դրա համար ճիշտ է սենեակային ջուր խմելը, իսկ քաղցր ըմպելիքները փոխարինէք թարմ ճզմած մրգահիւթով:

3. Պինդ ուտելու կողմնակիցները լաւ կը լինի փոխեն սովորութիւնը. օրաբաժնում զգալի մաս պէտք է կազմեն մրգերն ու բանջարեղէնը: Ոչ մի տապակած ու ապխտած ուտելիք: Իսկ ջրիկ ուտելիքներից շատ լաւ հագեցնում ու զովացնում է մածնաբրդոշը:

4. Ֆիզիկական ակտիւութիւնը լաւ է, սակայն շոգին այն կարող է

Շար.ը էջ 19

# 20 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԶՐԿԵՑԻՆ ՆԵՐՈՒԺԻՑ

*Շարունակուած էջ 6-էն*

*մար, ինչը պէտք է Հայաստանը հասցներ այս օրուանը: Ազատամարտիկների խնդիրների լուծումը, նրանց համար էական արտօնութիւնների սահմանումը ինչպիսիք են կոմունալ վարձերից ազատումը, անվճար բուժումը, աշխատանքով ապահովումը, անվճար ուսուցումը նրանց երեխաների համար, բնակարանների անվճար յատկացումը, արտօնեալ վարկերը անհրաժեշտ են, ոչ միայն տարրական արդարութիւնը վերականգնելու, այլեւ Հայաստանի ազգային անվտանգութիւնը ամրապնդելու համար: Ծանրագոյն վիճակում են Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցները, որոնց թիւը 3 տարի առաջ 16 հազար էր, իսկ այսօր 4000: Հայ ժողովրդի հերոսական անցեալը ներկայացնող այս յարգարժան մարդիկ նոյնպէս դուրս են մնացել պետական հոգածութիւնից եւ ուշադրութիւնից: Ուստի մենք դիմում ենք ազատամարտիկ Սերժ Սարգսեանին, խնդրելով իր վրայ վերցնել այս խնդիրների առաջնահերթ լուծումը:*

*5. «Հայաստանի աշխարհագրական դիրքը անբարենպաստ է»- նման թէզը հայ մարդու գիտակցութեան մէջ արմատաւորողը կամ աշխարհագրութիւնից ոչ մի գաղափար չունի, կամ պարզապէս թշնամի է, որովհետեւ նպատակը մեր մօտ դատապարտուածութեան, անելանելիութեան, անզօրութեան համոզմունքի հաստատումն է եւ արդիւնքում հարեւանների պահանջներին ենթարկելը: Հայաստանը զբաղեցնում է գերկարեւոր ռազմավարական-աշխարհաքաղաքական դիրք տարածաշրջանում: Դա շատ լաւ հասկանում եւ ընդունում են ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը, Իրանը, յատկապէս Թուրքիան եւ բոլոր այն երկրները որոնք սեփական շահեր են հետապնդում Հարաւային Կովկասում: Հայաստանը փակ դարպաս է Թուրք-ամերիկեան ծրագրերի առաջ: Ծրագրեր, որոնց իրականացումը Հայաստանին եւ հայութեանը միայն վնաս են բերելու: Աշխարհագրօրէն, Հայաստանը բարձրադիր երկիր է եւ ի վիճակի է կառավարել հարեւան զգալի տարածքների ջրային բալանսը, ինչը մեծահոգաբար չի արւում: Յիշենք Եփրատի միջոցով Սիրիային զիջումներ պարտադրելու Թուրքիայի գործողութիւնները: Ջրի, արեւի եւ քամու էներգիայի ռեսուրսներով Հայաստանը առաջատար է: Ատրպէյճանի եւ Վրաստանի համեմատ Հայաստանի կլիմայական պայմանները առաւել քան գերադասելի են: Ռազմական գործողութիւնների ժամանակ, Հայաստանի դիրքը տալիս է մեծագոյն առաւելութիւններ եւ այլ բազմաթիւ ակնյայտ առաւելութիւններ, որոնք մի կողմ դրած, մեզ համոզում են, որ ձեր դիրքը շատ վատն է որովհետեւ չունենք ելք դէպի ծով: Իսկ միթէ՞ ծովը միշտ բարիք է:*

*Կարճ եւս 3 կարծրատիպերի մասին*

*«Հայ-Թրքական սահմանի բացումը կարագացնի Հայաստանի զարգացումը», իհարկէ կարագացնի, բայց Թուրքիայի եւ Արեւմուտքի ազդեցութեան հաստատումը միջին Ասիայում, թուլացնելով այնտեղ Ռուսաստանի ազդեցութիւնը, իսկ Հայաստանը կը վերածուի Թրքական բազարի:*

*«Հայաստանը չպէտքէ խառնուի Սփիւռքի գործերին, իսկ Սփիւռքը՝ Հայաստանի»: Այնքան թշնամական է, որ մեկնաբանութեան կարիք չունի:*

*«Հայաստանը պարէնով ինքնաբաւ լինել չի կարող», իհարկէ, հսկայական գումարներ են պտտւում պարէնի ներմուծման դաշտում, ինչո՞ւ կորցնել: Աւելի լաւ է հողը խոփան դարձնել:*

*Ընդհանրապէս, կարծրատիպի հաստատումը մասսայի գիտակցութիւնը մանիպուլիացիայի ենթարկելու գործիք է: Որեւէ խնդրի շուրջ արհեստականօրէն ձեւաւորուած կարծրատիպը, հասարակութեանը «ազատում» է մտածելու, վերլուծելու, ստեղծագործելու անհաժեշտութիւնից եւ ձեւաւորում է քաղաքական նոր վարքագիծ:*

*Շուկայական տնտեսական համակարգը Հայաստանը դարձրել է աղէտի գօտի: Դատէք ինքներդ՝ հողային ռեսուրսների օգտագործման օգտակար գործակիցը կազմում է 10-12 %, արդիւնաբերականի՝ 5-7 %, գիտականի՝ 5-6 %: Որտեղի՞ց լինի զարգացում եւ բարեկեցութիւն: Բայց լիբերալ համակարգը այս հարցում նոյնպէս հնարել է հրաշագործ հաշուարկային մեթոդաբանութիւն: Ազգային վիճագրական ծառայութիւնը մեզ համոզում է, որ 3 անգամից աւել կրճատուած խաղողի այգիներից հաւաքում են նոյնքան եւ աւելի շատ բերք, որ շինարարութեան ծաւալները անընդհատ աճում են այն դէպքում, երբ շինանիւթերի արտադրութիւնը անընդհատ նուազում է: Սա էլ աննպատակ չի: Հետխորհրդային տարածքում ամենաշուկայականացուած երկիր Հայաստանը, որը անցել է ծանրագոյն երկրաշարժի, պատերազմի միջով եւ 18 տարի գտնւում է շրջափակման մէջ, պէտք է անշեղ աճ ցոյց տայ, որպէսզի համակարգի գլխաւոր հովանաւոր ՄԱՀ-ը կարողանայ համոզել եւ նոյն քայքայման դաշտը մտցնել նոր երկրներ: Վերջին 30 տարիներին ՄԱՀ-ը հիմնաւորապէս քայքայել է տասնեակ երկրներ որոնցից են Արգենտինան, Մեքսիկան, Հարաւսլավիան, Ռուանդան, Սոմալին, Ինդոնեզիան, Բրազիլիան, Պերուն եւ այլն: Իսկ երբ ՄԱՀ-ի գործադիր տնօրէն Դոմինիկ Ստրոս Կանը յայտարարեց որ ՄԱՀ- ի առաջարկած տնտեսական մեխանիզմները վնասաբեր , քայքայիչ են ու մեծապէս հիմք են հանդիսացել համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հասունացման համար, որ Ուաշինկթոնեան կոնսենսուսը սպառել է իրեն «անմիջապէս շինծու մեղադրանքով կալանաւորուեց: Պաշտօնից հեռացուեց, այնուհետեւ արդարացուեց: Այսպիսին է ՄԱՀ-ը: Աստուած իրենց հետ:*

*Պետութիւնը նման է ժամացոյցի: Եթէ նրա բոլոր մասնիկները փոխադարձ ներդաշնակուած են, ապա ժամացոյցը ճիշտ է աշխատում: Հայաստանում այն խափանուած եւ չաշխատող է եղել ի սկզբանէ: Պետական կառավարման էֆեկտիւութիւնը չի կարող բարձրանալ միայն խորը կադրային փոփոխութիւններ իրականացնելու միջոցով, նոյնիսկ եթէ դա կատարուի: Համակարգի մասերը գործում են հակասութիւնների, լիազօրութիւնների կրկնութիւնների ու բացերի դաշտում: Կարծում եմ դրա պատճառը այն է, որ պետական մեխանիզմի բաղկացուցիչները չեն համախմբուած մէկ նպատակի՝ ժողովրդին եւ Հայրենիքին անմնացորդ ծառայելու խնդրի շուրջ: Շատերը պարզապէս հակառակ նպատակն են հետապնդում:*

*Զինուվնիկների պաշտօնական պարտականութիւններով նախատեսուած թոյլտուութիւն եւ համաձայնութիւն տալու իրաւունքների չարաշահումը գոյացրել է հազարաւոր ռենտատեր պորտաբոյծներ: Երկրի տնտեսական մարմինը ամբողջապէս պատուած է նրանցով ու այդ մարմինը ոչ միայն զարգանալ չի կարող, այլեւ շնչահեղձ է լինում: Այս իրավիճակում, իշխանութեան ձեռնարկած ամենաանհրաժեշտ եւ ճիշտ քայլերն իսկ դատապարտուած են ձախողման: Իսկ ո՞րն է ելքը:*

*1. Ուղղել 21 ամեայ անկախ Հայաստանի ամենամեծ բացթողումը՝ ընդունել Ազգային զարգացման ծրագիր: Այդ ծրագիրը պէտք է ուղենիշ լինի բոլոր իշխանութիւնների, կուսակցութիւնների ու ժողովրդի համար: Այդ ծրագիրը կ՚ապահովի Հայաստանի ներդաշնակ զարգացումը՝ մայրաքաղաքից մինչեւ գիւղ, ներառելով երկրի բնական, տնտեսական, արտադրական, գիտական ողջ ներուժի փոխլրացնող, փոխկապակցուած օգտագործումը: Միայն այս ճանապարհն է որ կ՚ապահովի բարեկեցութիւնը եւ արդարութիւնը երկրում: Սա է որ կը վերականգնի ժողովրդի հաւատը իշխանութեան հանդէպ: Սա է, որ կը չէզոքացնի վերը նշուած կարծրատիպերի գործածութիւնը երկրում: Սա է, որ կը շրջանագծի իշխանութիւնների գործունէութեան դաշտը եւ կը բացառի, երբեմն աւանտիւրիզմի հասնող կամայականութիւնները: Մենք առաջարկում ենք իշխանութեանը ստեղծել Ազգային գաղափարախօսութեան եւ Ազգային զարգացման ծրագրի մշակման յանձնաժողով բոլոր շահագրգիռ ուժերի մասնակցութեամբ:*

*2. Տարիներ շարունակ, խանդավառութեամբ կատարելով ՄԱՀ-ի տնտեսական կառավարման ոլորտում պետութեան դերի նուազեցմանն ուղղուած յանձնարարականները, այսօր ճիւղային նախարարութիւնները զրկուել են ոլորտի կառավարում իրականացնելու հնարաւորութիւններից եւ վերածուել են պարզապէս խորհրդատուական մարմինների: Կուտակուել են, հազարաւոր չլուծուած եւ օր-օրի ծանրացող խնդիրներ, որոնք իբր պէտք է լուծեր «ինքնակարգաւորուող շուկան»: Արդիւնքում Հայաստանը դարձել է կուտակուող հոգսերի երկիր: Ընդ որում, հոգսերը օր օրի ծանրանում են եւ ժողովրդի եւ իշխանութեան ուսերին: Սխալը ակնյայտ է, ուրեմն օր առաջ պէտք է սկսել սխալի ուղղումը, իրականացնելով անցում լիբերալից սոցիալ-դեմոկրատական համակարգի: Ինչո՞ւ սոցիալ-դեմոկրատականի:*

*Որովհետեւ.*

*1. Սոցիալ-դեմոկրատիան պատասխանատւութիւն է կրում բնակչութեանը աշխատանքով ապահովելու համար, ոչ թէ այդ հարցում «նպաստում է», ինչպէս սահմանում է այսօր գործող Սահմանադրութիւնը(հ. 48-2) :*

*2. Սոցիալ- դեմեկրատիան պատասխանատու է բնակչութեան առողջութեան պահպանման համար, ոչ թէ դրան «նպաստում է» (հ. 48-4):*

*3. ՍԴ ապահովում է երիտասարդութեան մասնակցութիւնը երկրի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքին, ոչ թէ «նպաստում» (հ.48-5):*

*4. ՍԴ ապահովում է գիտութեան զարգացումը, ոչ թէ «նպաստում» (h. 48-9):*

*5. ՍԴ ապահովում է անվճար բարձրագոյն եւ այլ մասնագիտական կրթութեան զարգացումը, ոչ թէ «նպաստում» (h. 48-8):*

*6. ՍԴ թոյլատրում է միայն պետական մենաշնորհ, այն էլ ռազմավարական կարեւորութիւն ունեցող ոլորտներում, ոչ թէ մասնաւորին(հ. 31-1):*

*Կարծում եմ, բոլորիս համար ակնյայտ է սոցիալ-դեմոկրատական արժեհամակարգի պահանջները ապահովող նոր Սահմանադրութեան ընդունման անհրաժեշտութիւնը, ինչից յետոյ կիրականացուի անցում հին համակարգից նոր համակարգ: Սա է, որ կը կարողանայ կասեցնել Հայաստանի քայքայման գործընթացը եւ դուրս բերել զազացման ուղի: Սա է, որ կ՚ապահովի սոցիալական արդարութիւնը եւ հաւասարութիւնը Հայաստանում:*

*Ո՞վ կարող է իրականացնել այս ծրագիրը: 1. Եթէ իշխանութեան ներսում ձեւաւորուի հայրենասէր եւ սրտացաւ մարդկանց միասնական թիմ, ապա իշխանութիւնը, քանզի բոլոր անհրաժեշտ լծակները այն տեղ կան: Այս դէպքում ժողովուրդը շատ արագ կը զգայ թեթեւացում: Խնդիրը կայանում է նրանում թէ իշխանութիւնը դէմքով շուռ կը գայ դէպի ժողովուրդ, թէ շարունակելու նոյն կերպ: Չէ որ կուտակուող հոգսերի Հայաստանը նաեւ նրանցն է: 2. Ժողովուրդը, եթէ համոզուի որ իշխանութեան վրայ յոյս դնելը ծիծաղելի է: Այս դէպքում մենք կը համախմբենք վայրի լիբերալիզմի համակարգը սոցիալ-դեմոկրատականով փոխելու գաղափարի նուիրեալներին հայ ազգի բոլոր շերտերից, քանի որ խնդիրը համազգային է եւ վերաբերւում է բոլորին, բացի նրանցից, ովքեր այս համակարգը դարձրել են իրեն կերամսուրը: Առանձին ոչ ոք ի վիճակի չի իրականացնել համակարգի փոփոխում: Հարցս ուղղում եմ ձեզ, կարո՞ղ ենք միաւորել մեր ջանքերը Հայաստանի համար կարեւորագոյն այս գործում:*


**ՔԱՋ ՆԱԶԱՐ**

**ՈՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան**

**ժամը 10:00-ից 12:30**

**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

# ՄԱՀԱԶԴ



*ԿԱՐԱՊԵՏ ՓՈԼԱՏԵԱՆ*
*(Ծնեալ՝ 1924, Հալէպ)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին **ԿԱՐԱՊԵՏ ՓՈԼԱՏԵԱՆ**ի մահը որ պատահեցաւ Երեքշաբթի, Յուլիս 12, 2011ին:*

*Թաղման եկեղեցւոյ կարգը պիտի կատարուի Ուրբաթ, Յուլիս 15, 2011, կ.ե. ժամը 1ին, Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ, 58 S. Sierra Madre Blvd., ապա թաղման գերեզմանի կարգը՝ Live Oak Memorial Park գերեզմանատան մէջ, 300 E. Duarte Rd., Monrovia, CA 91016 (Tel. 626-359-5311):*

*Սգակիրներ՝*
*Այրին՝ Մարի Փոլատեան*
*Զաւակները՝ Յովհաննէս եւ Սալբի Փոլատեան եւ զաւակները*
*Գրիգոր եւ Ջեփիւռ Փոլատեան եւ զաւակները*
*Քնար եւ Վազգէն Պողարեան եւ զաւակները*
*Եւ համայն հարազատները, խնամիները եւ բարեկամները ամէնուրեք:*

# ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԸ

*Շարունակուած էջ 14-էն*

*Թարգմանների Միաբանութիւն, հայերէն դասեր առել հայագէտ միաբան՝ Արսէն Ղազիկեանից: Յաճախել Մարսէյլի համալսարան, վկայուել գրականութեան ու իրաւաբանութեան «Պսակաւոր Արուեստից» տիտղոսին:*

*Առաջին Համաշխարհային Պատերազմին զինուորագրուել է ֆրանսական բանակ: Ծառայել նաւատորմում որպէս թարգման-քոմիսէր, զբաղեցրել այլ բարձր պաշտօններ: 1915 թուականի Սեպտեմբերին հանդիսացել Տէսէքս գրահաւորի զինուորական կցորդը:*

*Ֆրանսական ռազմանաւեր էին պարեկել Միջերկրական ծովի Մուսա Լերան յարող ափերը: Ռազմանաւի նաւազները լերան վրայ կարմիր խաչով սպիտակ պաստառ էին նկատել: Կռահելով, որ այդ լեռներում միայն Քրիստոնեայ հայեր կարող էին բնակած լինել, յայտնել էին նաւում պաշտօնաւորող ծովային սպայ Տիրան Թէքէեանին: Մուսա Լեռցիների պատուիրակներ էին բարձրացել ռազմանաւ, պատմել իրենց կռուի մասին:*

*Տիգրան, ռազմանաւից ու ծովափից հետեւել էր լերան վրայ ընթացող մարտերի առանձին դրուագներին: Միջնորդել ու կազմակերպել էր իրենց լեռներում կռուի ելած 4200 մուսալեռցեիների տարահանումը Եգիպտոսի Փոր Սայիտ նաւահանգիստ: Իր նախնիների ոգու հրայրքը սրտում կարողացել էր համատեղել ֆրանսացի ծովային սպայի ծառայողական յանձնառութիւններն ու հոգու պարտքը հերոսական պայքարի ելած իր ցեղի մի հատուածի նկատմամբ: Իրապէս յիշողութեան արժանի մեծի գործ, ոչնչացումից փրկել հազար-հազար ցեղակիցներին, հայոց մի սխրանքը եւս տանել աշխարհին:*

*Ինչպէս բոլոր հայերը, այնպէս էլ Տիրանի երազանքն էր, դաշնակիցների յաղթանակից յետոյ, տեսնել Հայկական Կիլիկեան Ֆրանսայի հովանիի ներքոյ ինքնավար դարձած: Սկանատեսը Անգլիական ու Ֆրանսական խարդաւանքների, յուսալքուած Մարսէյլ էր վերադարձել:*

*1925 թուականին, նրան շնորհուել էր «Շըւալիէ տը լա Լեժիոն Տ'օննէօր» շքանշան: Երկրորդ համաշխարհային Պատերազմին նորէն ծառայել էր ֆրանսական ծովակալութիւնում որպէս առաջին կարգի սպայ: 1952 թուականին, արժանացել «Լէյիոն Տ'օննէօր» սպայական տիտղոսին: Երկար տարիներ հանդիսացել է ֆրանսական բանակի նախկին հայ կամաւորների պատուոյ նախագահ: 1967 թուականին, 80 ամեայ անզուգական հայու մահն էին գուժել հայկական ու ֆրանսական բազում լրագրեր:*

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7552)**
**NATIONAL EXECUTIVE RECRUITMENT SERVICES FOR PRESIDENT & CEO**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified national executive search firms to assist in the selection of a President and CEO. The qualifications for the ideal candidate for the position of President and CEO are defined by the Board of Commissioners. Copies of the RFP may be obtained beginning June 27, 2011 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., July 20, 2011.**

7/7, 8/4/11
CNS-2127133#
MASSIS WEEKLY

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

*ԹԱԳՈՒՀԻ ԵԹԵՐԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Յուլիս 2011ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:*

*Խնդրողներ՝*
*Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Թոմաս Եթերեան եւ զաւակունք*
*Տիար Սարգիս Աթամեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Յակոբ Յակոբեան եւ զաւակունք*
*Տէր եւ Տիկ. Փարամազ Գիպարեան եւ զաւակը*
*Ցիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

# ՍԹՐԵՍՆԵՐՆ ՈՒ ՆԵՎՐՈԶՆԵՐԸ ԿԱՆԽԻՈՒՄ ԵՆ

*Շարունակուած էջ 17-էն*

*նում է մաշկի մէջ վիտամին D-ի արտադրութիւնը: Իսկ լաբորատոր թեստերն ասում են, որ կրծքի բջիջները կարող են վիտամին D-ն վերափոխել հակաքաղցկեղային հորմոնի:*

*Գանատացի գիտնականները համեմատել են կրծքագեղձի քաղցկեղ ունեցող 3101 կանանց՝ 3471 առողջ կանանց հետ: Իւրաքանչիւր մասնակցին հարցնում էին, թէ ինչքան ժամանակ էր նա Ապրիլից Հոկտեմբեր ամիսներին անցկացնում արեւի տակ դեռահաս տարիքում, 20 տարեկանում, 30, 40, 50 եւ 60-70 տարեկանում:*

*Արդիւնքները վկայում էին այն մասին, որ այն կանայք, ովքեր դեռահաս տարիքում արեւի տակ անցկացնում էին շաբաթական գոնէ 21 ժամ, 29%-ով աւելի քիչ էին տառապում քաղցկեղով, քան նրանք, ովքեր արեւի տակ անցկացնում էին օրական 1 ժամից էլ քիչ:*

*Իսկ 40-50 տարեկան այն կանանց մօտ, ովքեր արեւի տակ անցկացնում էին համեմատաբար շատ ժամանակ, քաղցկեղի առաջացման հաւանականութիւնը նուազում էր 26%-ով: 60-70 տարեկան կանանց մօտ 50%-ով նուազում էր ուռուցքի առաջացման հաւանականութիւնը:*

*Doctors.am-ի փոխանցմամբ՝ Հարվըրտի առողջութեան ընդհանուր դպրոցի մասնագէտները, ովքեր 20 տարի շարունակ հետեւում էին մօտ 119 000 չափահաս մարդկանց առողջական վիճակին, բացայայտեցին, որ այն տղամարդիկ, ովքեր օրական ստանում էին վիտամին D-ի առնուազն 600 ME քանակը՝ 16%-ով ավելի քիչ էին խնդիրներ ունենում սրտի հետ, քան նրանք, ովքեր ստանում էին 100 ME: Կանանց դէպքում այս սկզբունքը չէր գործում:*

# ԱՄԱՌ. ՇՈԳ, ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 17-էն*

*բառիս բուն իմաստով՝ սպանել. չէ՞ որ ջերմափոխանակութիւնն աւելանում է 5 անգամ: Մի ելք կայ. կամ պէտք է պարապմունքները տեղափոխել օդափոխուող դահլիճներ կամ էլ հրաժարուել պարապմունքներից, մինչեւ շոգերը կոտրուեն:*

*5. Փողոցում անտանելի շոգ է, իսկ տանն ունէք օդափոխիչ:*

*Սակայն յաճախ դրանք ոչ թէ փրկութիւն են, այլ վնաս, մրսելու ու հիւանդանալու վտանգ: Ուստի յիշէք, որ դրսի ու ներսի ջերմութեան տարբերութիւնը պէտք է առաւելագոյնը 10 աստիճան լինել: Ու տուն վերադառնալով անմիջապէս օդափոխիչի մօտ մի նստէք: Սկզբում «հովացէք», ապա յետոյ, ցանկութեան դէպքում նոր միայն կարող էք օդափոխիչն աշխատեցնել:*

*6. Հնարաւորութեան դէպքում տնից կամ շէնքից դուրս մի եկէք ժամը 9-18-ն ընկած ժամանակահատուածում, քանի որ դա համընկնում է արեգակնային ակտիւութեան շրջանի հետ: Եթէ ստիպուած էք այդ ժամերին փողոցում գտնուելու, ապա հագնուէք թեթեւ, աւելորդ չէ գլխարկը, որն արեգակի ուղիղ կիզիչ ճառագայթներից կը պաշտպանի ձեզ:*

*7. Ամառը ջրային պրոցեդուրաների ժամանակն է: Լողափ, ջրաւազան, ջրաշխարհ, դրանք կարելի է իրաւամբ ամառուայ համար դրախտավայրեր համարել: Սակայն սա եւս անվտանգ չէ. լսե՞լ էք, գիտէ՞ք ինչ է օտիտը, աւելի պարզ՝ ականջի բորբոքումը: Բժիշկները կատակով օտիտն այլ կերպ անուանում են «լողորդի ականջ»: Լողալու ժամանակ ջուր է լցւում ականջի մէջ, իսկ խոնաւ միջավայրը նպաստում է ականջի բորբոքմանը:*

*Դրա համար օգտուէք լողագլխարկներից:*

*8. Քրոնիկ հիւանդութիւններ ունեցող մարդիկ նոյնպէս պէտք է ծայրահեղ զգոյշ լինեն: Արեան բարձր ճնշում ունեցողնե՛ր, հետեւէք ձեզ բուժող բժշկի խորհուրդներին, դեղորայքի չափաբաժնի շուրջ, քանի որ շոգին ճնշումն անկայուն է դառնում: Սրտի իշեմիկ հիւանդութիւն ախտորոշմամբ անձինք պէտք է ձեռնպահ մնան շարժողական ակտիւութիւնից:*

*Կաթուած տարած մարդկանց նոյն խորհուրդն է տրւում: Բացի այդ, միօրինակ աշխատանքից հեռու մնացէք ու գլուխը կախած դիրքից խուսափէք:*

*Ու վերջում, զաւեշտական է, սակայն ամառուայ տապին երազում ենք ձիւնառատ ձմեռուայ մասին: Սակայն, որքան էլ ամառը շոգ լինի, միեւնոյն է, պէտք չէ մոռանալ, որ ամէն լաւ ու վատ բան վերջ ունի:*

*ՀԱՅԿՈՒՀԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ*

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.



# ARMENIAN COMMUNITY COALITION of Pasadena

Pasadena Armenian Community Coalition
PACC

PRESENTS

# 4th Annual *Armenian Identity* FESTIVAL

## SUNDAY JULY 31, 2011

12:00PM-8:00PM VICTORY PARK
2575 PALOMA STREET, PASADENA

CITY OF PASADENA • INCORPORATED JUNE 1886

CO-SPONSORED BY:
THE CITY OF PASADENA

## CELEBRATING PASADENA'S 125TH ANNIVERSARY

FOOD • LIVE MUSIC • BOOTHS
CHILDREN'S ACTIVITIES
***FREE ADMISSION • FREE PARKING***

**ARMENIAN COMMUNITY COALITION OF PASADENA**
P.O. BOX 70548 • PASADENA, CA 91117
(626) 399-1799 • pcccoalition@gmail.com • www.acc-us.org